ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

[P504282]

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

[ՓԵՏՐՎԱՐ 14, 2025]

Նախագիծ

Բովանդակություն

Հապավումներ iv
1. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 6
2. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ 12
3. ԱՆԴՐԱԴԱՐՁ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԺԻՆ 13
4. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՈՏԵՆՑԻԱԼ ՎՏԱՆԳՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 18
5. ՀԱԿԻՐՃ ԱՆԴՐԱԴԱՐՁ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆԸ 28
6. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆԱԿԱԶՄ 40
7. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ 45
8. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԵԽԱՆԻԶՄ 46
9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 49
Հավելված 1: Վարքագծի կանոնակարգի օրինակ 51

Հապավումներ

ԱԱ	Առողջություն և անվտանգություն
ԱԱԱ	Առողջություն և աշխատանքի անվտանգություն
ԱԱՏՄ	Առողջության և աշխատանքի տեսչական մարմին
ԱԻԱԲ	Արտակարգ իրավիճակների արձագանքման բաղադրիչ
ԱԿԸ	Աշխատանքի կառավարման ընթացակարգեր
ԱՀԿ	Աշխատանքի համաշխարհային կազմակերպություն
ԱՄՆ ՄԶԳ	Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ԲԸՏՄ	Բնապահպանության և ընդերքօգտագործման տեսչական մարմին
ԲԼՄ	Բողոքների լուծման մեխանիզմ
ԲՄ	Բողոքների մեխանիզմ
ԲՍԳ	Բնապահպանական և սոցիալական գնահատում
ԲՍԱԳ	Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում
ԲՍՇ	Բնապահպանական և սոցիալական շրջանակ
ԲՍԱԱ	Բնապահպանական, սոցիալական, առողջության և անվտանգության
ԲՍԿՇ	Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակ
ԲՍԿՊ	Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան
ԲՍՍ	Բնապահպանական և սոցիալական ստանդարտ
ԵՄ	Եվրոպական Միություն
ԵՊՀ	Երևանի պետական համալսարան
ԶԿ	Զբոսաշրջության կոմիտե
ԶՄԵԾ	Զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր
ԷՆ	Էկոնոմիկայի նախարարություն
ԻԿ	Իրականացնող կազմակերպություն
ԾԳՄ	Ծրագրի գործադիր մարմին
ԾԻՄ	Ծրագրի իրականացման մարմին
ԿԶԾ	Կլաստերի զարգացման ծրագիր
ԿՊՀՀ	Կենսապահովման պայմանների համապարփակ հետազոտություն
ՀԱՀ	Հայաստանի Ամերիկյան Համալսարան
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀԿՀ	Համայնքային կապի համակարգող
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀԿ	Հայաստանի Հանրապետության կառավարություն
ՀՄԿ	Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ՄՊ	Մշտադիտարկման պլան
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄԱՓԿ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն
ՆԾՖ	Ներդրումային ծրագրի ֆինանսավորում
ՇՆՇ	Շահակիրների ներգրավման շրջանակ
ՇՆՊ	Շահակիրների ներգրավման պլան

ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՊԱԹՊՄՊԾ	Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՏԿԶ	Կայուն տարածաշրջանային (զբոսաշրջային) զարգացում
ՏՏԵԶԾ	Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր
ՏՔՇ/ՏՇ	Տարաբնակեցման (քաղաքականության) շրջանակ
ՈՒԿԿ	Ուղղության կառավարման կազմակերպություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

1. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիրը (ԶՄԵԾ) կաջակցի Արենիի, Դիլիջանի, Դվինի, Եղեգիսի, Գյումրիի, Գորիսի և Ջերմուկի յոթ առաջնահերթ կլաստերներում կայուն, ներառական և կլիմայական ինչպես նաև բնական աղետների հանդեպ ճկուն զբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառումներին և միջամտություններին: Ծրագրի զարգացման նպատակն է բարելավել կայուն, ճկուն և կլիմայական տեսանկյունից առաջադեմ ենթակառուցվածքային ծառայությունների հասանելիությունը Հայաստանում՝ Ծրագրում ընդգրկված կլաստերների շրջանակում տեղական տնտեսության մեջ զբոսաշրջության ներդրումն ավելացնելու համար: Ծրագրի հիմնական միջամտություններն ուղղված են կլաստերներից յուրաքանչյուրում զբոսաշրջության զարգացման հիմնական սահմանափակումների վերացմանը, ներառյալ հիմնական և որակյալ ենթակառուցվածքների և ծառայությունների բացակայության հարցի լուծումը, ինչպես նաև առաջարկները դիվերսիֆիկացնելու և ՀՀ կառավարության կլաստերային մոտեցման ներքո բացահայտված համապատասխան հիմնական խորշերը զարգացնելու անհրաժեշտությունը: Առաջարկվող Ծրագիրը նաև կհետևի և կհիմնվի Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ընթացիկ ծրագրի (ՏՏԵԶԾ) շրջանակներում իրականացվող ներդրումների, փորձի և քաղված դասերի վրա:

ԶՄԵԾ-ը բաղկացած է չորս ինտեգրված բաղադրիչներից, որոնք միասին կնպաստեն կլիմայական առումով դիմացկուն ենթակառուցվածքների հասանելիության բարելավմանն՝ ի շահ տեղական համայնքների և այցելուների, բարձրացնելով ընտրված վայրերի գրավչությունը, հնարավորություն տալով ստեղծել աշխատատեղեր և ավելացնելով տեղական տնտեսության մեջ զբոսաշրջության հատվածի ներդրումը:

Բաղադրիչ 1 – «Ինտեգրված եւ կայուն կլաստերի զարգացման խթանումը» կֆինանսավորի տեխնիկական աջակցությունը (ՏԱ), խորհրդատվական ծառայությունները, ապրանքներն ու սարքավորումն ի թիվս այլոց, և առնչվող վերլուծական և տեխնիկական ուսումնասիրությունների աշխատանքները՝ կլաստերի զարգացման ծրագրերի (ԿԶԾ) մշակման և իրականացման համար: ԿԶԾ-երը կօգնեն ղեկավարել ինտեգրված և կայուն զարգացումը և կներառեն կլաստերի ընդհանուր տեսլականը 10-ամյա պլանավորման հորիզոնում, ներառյալ զարգացման մանրամասն պլանները, որոնք ներառում են կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր՝ կապիտալացնելու յուրաքանչյուր կլաստերի զբոսաշրջության զարգացման ներուժը և աշխատանքի ստեղծումը: ԿԶԾ-երը կհաստատվեն Ծրագրի կառավարման կոմիտեի (ԾԿԿ)[1] կողմից և կծառայեն որպես ուղեցույց՝ համապատասխան կլաստերների ներքո միջամտությունների առաջնահերթության համար, ներառյալ դրանց ընդհանուր կառավարումը, ինչպես նաև շահագործման ու պահպանման դրույթները: Այս բաղադրիչով նախատեսվում են տեխնիկական աջակցության հետևյալ հիմնական գործողությունները, որոնք ներառում են.

(ա) Դիլիջանի, Դվինի, Գորիսի, Ջերմուկի և Եղեգիսի ԿԶԾ-երի մշակումը և վերջնականացումը, որը կհաստատվի ԾԿԿ-ի կողմից[2]: ԿԶԾ-երը նաև հաշվի կառնեն կանաչ, ճկուն և ներառական զարգացման մոտեցումները, քաղաքային և տարածքային պլանավորումը և

[1] ԾԿԿ-ն նախագահում է փոխվարչապետը, ԾԿԿ-ի կազմը ներկայացված է «Բաժին III. Ծրագրի իրականացում» հատվածում:

[2] Արենիի ԿԶԾ-ն մշակվել է ՏՏԵԶԾ-ի շրջանակներում, իսկ պահանջվող ներդրումները նախագծվել են ԶՄԵԾ-ի շրջանակներում, երբ ծրագիրը մեկնարկի: Գյուղմրում համար ԶՄԵԾ-ն կօգտագործի արդեն մշակված գոյություն ունեցող ռազմավարությունները և զարգացման ծրագրերը, և նոր ԿԶԾ-ի մշակվի:

համապատասխանությունը գործող մարզային և համայնքային զարգացման ծրագրերին: Պահանջարկի գնահատումը և տնտեսական վերլուծությունը կիրականացվեն որպես ԿԶԾ մշակման մաս, և կլաստերների զարգացման առաջնահերթությունները կընտրվեն տեղական համայնքների, բիզնեսի և այլ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ՝ մասնակցային մոտեցումների միջոցով: ԿԶԾ-երը կընդգրկեն կլիմայական առումով զգայուն գործողությունների պլաններ, որոնց միջոցով կլաստերների համար կընտրվեն ցածր ածխածնի առաջացմամբ և հարմարվողական ներդրումների տարբերակներ[3]: ԿԶԾ-երը նաև նպատակ կունենան առավելագույնի հասցնել կլաստերների շրջանակում զբոսաշրջության և առնչվող ոլորտներում զբաղվածության ներուժը: ԿԶԾ-երի առաջնահերթ միջամտությունները կիրականացվեն Բաղադրիչ 2-ի շրջանակներում:

(բ) Կլիմային և աղետներին դիմակայուն գոտիավորման և գլխավոր պլանների, ներդրումների պլանավորման ուսումնասիրությունների և այլ վերլուծական աշխատանքների պատրաստում (օրինակ՝ տեխնիկատնտեսական հիմնավորումները), որոնք անհրաժեշտ են ԿԶԾ-երի պատրաստման, մշակման և վերջնական տեսքի բերելու համար:

(գ) Հանրային իրազեկման արշավներ և առնչվող քաղաքացիների ներգրավման գործողություններ ԿԶԾ-ների պատրաստման ընթացքում և դրանից հետո՝ խթանելու տեղական սեփականության իրավունքը, հագեցնելու ապագա քաղաքային և տարածքային պլանավորումը տեղեկություններով, աջակցելու որոշումների կայացմանը:

(դ) Ընտրված զբոսաշրջային ակտիվների և մշակութային ժառանգության վայրերի համար տեղամասի կառավարման և/կամ գործառնական և սպասարկման պլանների մշակում՝ աջակցելու բնական, մշակութային և սոցիալական ակտիվների մշտադիտարկմանը և պահպանմանը՝ երկարաժամկետ կայուն գործունեության և զբոսաշրջային ակտիվների կառավարման համար:

(ե) Հարցումների և զբոսաշրջության տվյալների հավաքագրման այլ գործողությունների իրականացում անանուն տեղեկատվության հավաքագրման նպատակով՝ տեղեկություններով համալրելու տեղական զբոսաշրջության վիճակագրությունը զբոսաշրջության շահագրգիռ կողմերի միջոցով, ինչպիսիք են Զբոսաշրջության կոմիտեն, Ուղղությունների կառավարման գրասենյակները (ՈՒԿԳ) և զբոսաշրջության այլ շահագրգիռ կողմերը:

(զ) Աջակցություն Արենի, Դիլիջան, Եղեգիս և Ջերմուկ կլաստերներում ՈՒԿԳ-ների ստեղծմանը և/կամ գործունեությանը՝ դասընթացների և ներուժի զարգացման, ապրանքների և սարքավորումների տրամադրման միջոցով:

(է) Առաջնորդների վերապատրաստման միջոցառումներ և զբոսաշրջության արժեքային շղթայում կանանց տեղական մասնակցության խթանում՝ որոշումներ կայացնող մարմիններում առաջնորդի դեր ստանձնելու համար, այդ թվում՝ Ծրագրի շրջանակներում Տեղական աշխատանքային խմբերում (ՏԱԽ)[4] ներկայացվածության ընդլայնման միջոցով, ինչպես նաև աջակցություն կանանց՝ անհրաժեշտ կարողությունների զարգացման և հմտությունների ընդլայնման միջոցով:

[3] Տես նաև Բաժին IV. Ծրագրի գնահատման ամփոփում: Ծրագրի գնահատման փաստաթղթում Գարիզի համաձայն նպատակի հետևողականությունը մեկնաբանվում է:

[4] ՏԱԽերի մասին լրացուցիչ տեղեկություններ տե՛ս «Հնարավոր միջոցառումներ և իրականացման միջոցառումներ» բաժին III. Ծրագրի իրականացում:

Բաղադրիչ 2 – «Աջակցություն կլիմայական առումով ճկուն ենթակառուցվածքներին եւ տեղական տնտեսության մեջ մասնավոր հատվածի մասնակցության խթանում» բաղադրիչը նպատակ ունի վերացնել

ԿՋԾ-երով հայտնաբերված հիմնական ծառայությունների տրամադրման, ինչպես նաև մարզային զբոսաշրջության զարգացման տեսակետից ծառայությունների բացերն առաջնահերթ յոթ կլաստերներում: Այս բաղադրիչի շրջանակներում իրականացվող գործողությունների ընտրությունը կհիմնվի 1-ին բաղադրիչի ներքո մշակված և վերջնականացված ԿՋԾ-երի վրա: Այս բաղադրիչը կֆինանսավորի ինժեներական, տեղանքի և այլ տեխնիկական գնահատումները, տեխնիկատնտեսական հիմնավորումները (ՏՏՀ), ճարտարապետական և մանրամասն ինժեներական նախագծերը և շինարարական աշխատանքները: Բաղադրիչը ներառում է հետևյալ ենթաբաղադրիչները.

Ենթաբաղադրիչ 2.1. «Ենթակառուցվածքների եւ ծառայությունների վերականգնում եւ արդիականացում» ենթաբաղադրիչը կֆինանսավորի խորհրդատվական և շինարարական աշխատանքները՝ կատարելով միջամտություններ ուղղված հիմնական ենթակառուցվածքների բարելավմանը և քաղաքային ենթակառուցվածքների արդիականացմանը, կենսունակության բարձրացմանը և զբոսաշրջային վայրերի և հարակից տարածքների հասանելիության բարելավմանը: Ամբողջ ենթակառուցվածքը նախագծվելու և ներդրվելու է կլիմայական և աղետների ռիսկերին, այդ թվում՝ երկրաշարժերին դիմակայելու համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության նորմերին

շինարարական չափանիշներին հաշվի առնելով համաշխարհային լավագույն փորձը: Բաղադրիչի շրջանակներում ներդրումները կներառեն, բայց չեն սահմանափակվի հետևյալով[5].

(ա) Ճանապարհների և տրանսպորտի հետ կապված ենթակառուցվածքների որակի և վիճակի բարելավում, ներառյալ կանաչ և էկոլոգիապես մաքուր փոխադրամիջոցներ այլընտրանքային ձևերի

(օրինակ՝ հասարակական տրանսպորտի համակարգեր, ինչպիսիք են ճոպանուղիները, էլեկտրական ավտոբուսները, հեծանիվները և այլն) խթանումը: Այս գործունեությունը կներառի ճանապարհների և կամուրջների կառուցում, վերականգնում / բարելավում և / կամ սպասարկում, հետիոտնային գոտիների ընդլայնում, փողոցների ձևավորում և լուսադիոդային լուսավորության տեղադրում և կանաչ ենթակառուցվածքի այլ տարրերի օգտագործում՝ կլիմայական առումով ճկունության ապահովման և փողոցների, մոտեցնող ճանապարհների և ավտոկայանատեղերի գրավչության բարելավման նպատակով: Ներդրումները նախագծված կլինեն ազգային չափանիշներին համապատասխան և հաշվի կառնեն հաշմանդամության ներառման գլոբալ լավագույն փորձը, ինչպես նաև կլիմայի և աղետների դիմակայունության բարելավումը (օրինակ՝ հեղեղումների մեղմացման և էրոզիայի վերահսկման միջոցառումների ներդրում): Բարելավումները կներառեն նաև հասարակական փոխադրամիջոցները՝ բարելավելու մուտքը դեպի զբոսաշրջային վայրեր, կայանատեղիները և հետիոտների հետ կապը՝ խրախուսելով մուտքը դեպի հիմնական տեսարժան վայրեր առանց շարժիչի փոխադրամիջոցներով:

(բ) Հիմնական ենթակառուցվածքների և ծառայությունների արդիականացում և քաղաքային ենթակառուցվածքների վերականգնում, ներառյալ առկա տեղական ջրամատակարարման

[5] Յուրաքանչյուր կլիմայական միջամտությունների հնարավոր ցանկը և դրանց պարտադիրությունը ներկայացված է Հավելվածում:

բարելավումը. կոյուղու համակարգերի, կեղտաջրերի հավաքման և հեռացման համակարգերի վերականգնում և արդիականացում և բարելավումներ՝ հեղեղաջրերի պատշաճ կառավարման համար:

Ենթաբաղադրիչը նաև կաջակցի հեռահաղորդակցության ենթակառուցվածքի վերականգնմանը և/կամ արդիականացմանը՝ տեղական համայնքների և ձեռնարկությունների թվային հասանելիությունն ու կապը բարելավելու համար:

(գ) Հասարակական վայրերի և տարածքների գրավչության բարձրացում, ներառյալ կանաչ տարածքների վերականգնումը և/կամ ընդլայնումը, հանրային պարկի բարելավումը, փողոցների կանաչապատումը և համապատասխան քաղաքային հարմարությունների ապահովումը՝ զբոսաշրջային բավարար փորձին համապատասխանելու համար:

(դ) Զբոսաշրջությանն առնչվող ենթակառուցվածքների և ծառայությունների տրամադրում, ներառյալ զբոսաշրջային հարմարությունների կառուցումը կամ վերականգնումը, ինչպիսիք են ուղղությունների կառավարման գրասենյակները և թանգարանները, և մշակութային ժառանգության արժեքների պահպանումն ու բարելավումը: Հարմարությունների վերականգնման առումով գերապատվություն կտրվի էներգաարդյունավետության բարելավմանը, և բոլոր նորակառույց շենքերը կհամապատասխանեն էներգաարդյունավետության չափանիշներին, որոնք առնվազն համահունչ են Առավել արդյունավետ չափանիշներով գերազանցության նախագծին (1) (EDGE-մակարդակ): Նախագծերը կներառեն նաև թափոնների նվազեցման նկատառումներ՝ օգտագործելով ցածր ածխածնային նյութեր և բարձրացնելով ջրի օգտագործման արդյունավետությունը:

ե) Աջակցություն Հանրային-մասնավոր ներդրումներին (ՀՄՆ), որը ներառում է մասնավոր ներդրումներ ներգրավելու նպատակով լրացուցիչ հանրային ենթակառուցվածքների բարելավման ապահովում: Այս գործունեությունը կապահովի հանրային ենթակառուցվածքներ, որոնք անհրաժեշտ են առևտրային ներդրումների կենսունակությունը ապահովելու համար, ինչպիսիք են նոր կամ վերականգնված հարակից հանրային օբյեկտները, ճանապարհներն ու փողոցները, ջուրը և սանիտարական համակարգը և հեռահաղորդակցությունը[6]: Հիմնվելով մասնավոր հատվածի կազմակերպությունների ցուցաբերած հետաքրքրության և հանձնառության վրա՝ այս գործունեությունը նպատակաուղղված կլինի նպաստել ավելի լայն տնտեսական զարգացման և առևտրային ներդրումների կուտակման բարենպաստ միջավայրին:

ՀՄՆ ներդրումների բացահայտման, ընտրության և մշակման հատուկ ընթացակարգերը կներկայացվեն Ծրագրի կառավարման ձեռնարկում (ԾԿՁ):

ԿԶԾ-երի վերջնականացումը նախապայման չէ Բաղադրիչ 2-ի շրջանակներում գործողություններ սկսելու համար: Մինչ ԿԶԾ-երը պատրաստվում են, բաղադրիչ 2-ի համար իրավասու ենթածրագրերի տեսակը սահմանափակվում է ներդրումներով, որոնք շահավետ կլինեն համայնքի և զբոսաշրջության զարգացման համար՝ անկախ ԿԶԾ-ի վերջնական արդյունքներից, այսինքն՝ ներդրումների հետ կապված «ոչ մի ափսոսանք» չի կարող լինել: Հնարավոր «առանց ափսոսանքի» ներդրումները նկարագրված են Հավելված 2-ում:

[6] Առաջարկների ներկայացումը, ընտրությունը և հաստատման չափանիշները կհստակեցվեն Ծրագրի կառավարման ձեռնարկում:

Ենթաբաղադրիչ 2.2. Մասնավոր հատվածի մասնակցության խթանումը, մասնագիտական հմտությունների բարձրացումը եւ աշխատատեղերի ստեղծման հնարավորությունը (5 մլն ԱՄՆ դոլար) կֆինանսավորի խորհրդատվական ծառայությունները կլաստերների առաջմղման և տեղական տնտեսական զարգացման և զբոսաշրջության ոլորտում տեղական ընկերությունների և անհատների մասնակցության խթանման նպատակով: Առաջարկվող գործողությունները կներառեն.

(ա) Բրենդինգի, շուկայավարման և խթանման գործողություններ զբոսաշրջության արժեքային շղթայում:

(բ) Հանրային մասնավոր համագործակցության (ՀՄՀ) խթանում, ներառյալ ԿԶԾ-երի շրջանակներում բացահայտվող պոտենցիալ կենսունակ ՀՄՀ-ների գնահատումը, նախագծումը և պատրաստումը, օրինակ՝ զբոսաշրջության հետ կապված հասարակական տրանսպորտի համակարգերի շահագործման և պահպանման երկարաժամկետ պայմանավորվածությունների անհրաժեշտությունը (օրինակ՝ Դիլիջանում քննարկվող ճոպանուղու համակարգի առաջարկը):

(գ) Զբոսաշրջության և առնչվող բիզնեսում ներգրավված տեղացի աշխատողների համար HoReCa (հյուրանոց, ռեստորան և սննդի ծառայություններ) ոլորտում մասնագիտական հմտությունների զարգացումը՝ առաջնահերթություն տալով խոցելի և անապահով խմբերին (օրինակ՝ կանայք, երիտասարդները և խոցելի խմբերը, որոնք կարող են չունենալ անհրաժեշտ հմտություններ, ֆինանսական հնարավորություններ և աշխատանքային հնարավորություններ): Սա կներառի նաև զբոսաշրջության ոլորտի մասնագետների թիրախային թվով մասնագետների որակավորման բարձրացման ծրագրերի մշակումն ու իրականացումը:

(դ) Աշխատանքի վայրում ուսուցում (օրինակ՝ ռեստորանային և խոհարարական ուսուցում) և ֆորմալ ուսուցում (օրինակ՝ HoReCa սերտիֆիկացման ծրագրեր), որոնք պետք է մշակվեն և իրականացվեն ոլորտում ակտիվ ընտրված գործընկերների հետ[7]:

(ե) Տեղական զբոսաշրջային ընկերությունների և ձեռնարկատերերի համար դասընթացների և կարողությունների զարգացման այլ միջոցառումների իրականացում, որոնք ներառում են կանանց նախասիրությունները, կարիքները և նախագծային ներդրումները՝ մասնակցային գենդերային ընդգրկուն գործընթացի միջոցով:

(զ) Ուսումնասիրությունների և վերլուծական աշխատանքների մշակում՝ նախագծելու, աջակցելու իրականացմանը և/կամ մշտադիտարկելու գործողությունները՝ զբոսաշրջության ոլորտում աշխատատեղերի ստեղծումը կլաստերների շրջանակներում խթանելու նպատակով, ներառյալ պոտենցիալ միջամտությունների բացահայտումը, որոնց Ծրագիրը կարող է սատարել:

(է) Թվային գործիքների մշակում և/կամ առաջխաղացում, ինչպիսիք են ծրագրային հավելվածները, օրինակ՝ տրանսպորտի տարբերակների, իրադարձությունների, փառատոնների օրացույցների, մատչելի հարմարությունների, արշավային արահետների և տուր կազմակերպիչների մասին՝ իրական ժամանակում տեղեկատվություն տրամադրելու համար:

Բաղադրիչ 3 - Ծրագրի կառավարման եւ գործառնական աջակցության (4,5 մլն ԱՄՆ դոլար) բաղադրիչը կֆինանսավորի ծրագրի կառավարման ընդհանուր ծախսերը՝ կապված գործառնական

[7] Տես «Ծրագրի նկարագրություն» ենթաբաժինը «Ե Գործընկերների դերը»՝ գործընկերների հետառաջարկվող լրացուցիչ գործողությունների և մասնագիտական վերապատրաստման ծրագրեր տրամադրել ու վերաբերյալ մանրամասների համար:

գործունեության, խորհրդատվական ծառայությունների, ոչ խորհրդատվական ծառայությունների, տրանսպորտային միջոցների, ապրանքների և հաղորդակցության, իրազեկման և վերապատրաստումների ծախսերը: Այն կֆինանսավորի ծրագրի իրականացման գործակալության ծախսերը կապված կառավարման գործառույթների հետ և կապահովի, որպեսզի Ծրագիրը համապատասխանի Բանկի պահանջներին՝ կապված բնապահպանական, սոցիալական, ֆինանսական, աուդիտի և տեխնիկական չափորոշիչների հետ, ինչպես նաև մշտադիտարկման և գնահատման խորհրդատվական ընկերության ծախսերը՝ աջակցելու և ընդլայնելու իրականացնող գործակալության առկա ՄԵԳ համակարգերի կարողությունները: Բաղադրիչը նաև նպատակ ունի ընդլայնել ծրագիրն իրականացնող գործակալության՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարողությունները՝ վերապատրաստման և գիտելիքների փոխանակման միջոցառումների միջոցով:

Բաղադրիչ 4 - Արտակարգ իրավիճակների արձագանքման բաղադրիչ (ԱԻԱԲ). Զրո դոլար արժողությամբ այս բաղադրիչը թույլ կտա արագորեն վերաբաշխել Ծրագրի չհատկացված միջոցները հրատապ կարիքների համար աղետի (երկրաֆիզիկական, կլիմայական կամ տեխնածին) կամ հանրային առողջության արտակարգ իրավիճակների դեպքում: Նման իրադարձությունները կարող են ներառել ջրհեղեղներ, երկրաշարժեր, երաշտներ և հիվանդությունների բռնկում: ԱԻԱԲ-ի համար համաձայնեցված գործարկիչը հնարավորություն կտա վերաբաշխել Ծրագրի չհատկացված միջոցները Ծրագրի այլ բաղադրիչներից՝ աջակցելու անհապաղ արձագանքման և վերականգնման կարիքներին: Իրավասու գործողությունների ցանկը կհստակեցվի ԱԻԱԲ ձեռնարկում, որը պետք է պատրաստվի նախքան Ծրագրի արդյունավետությունը, և հատկացումները կիրականացվեն կարևորագույն ապրանքների, շինարարական աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների դրական ցուցակի դիմաց, որոնք անհրաժեշտ են անհապաղ արձագանքման և վերականգնման կարիքներին աջակցելու համար:

2. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ

Աշխատանքի կառավարման ընթացակարգերը (ԱԿԸ) պատրաստվել են մոտեցում ձևավորելու և պահանջներ սահմանելու նպատակով, որոնց օգնությամբ կազմակերպվելու է Ծրագրում ընդգրկված աշխատողների կառավարումը՝ ՀՀ օրենսդրության և Համաշխարհային բանկի բնապահպանական և սոցիալական ստանդարտների (ԲՍՍ) համաձայն, մասնավորապես «Աշխատանքի և աշխատանքային պայմանների մասին» ԲՍՍ2-ի համաձայն: Դրանք ներառում են ընթացակարգեր, որոնք վերաբերում են աշխատանքային դրույթներին և աշխատանքային պայմաններին, խտրականության բացառմանը և հավասար հնարավորություններին, բողոքարկման մեխանիզմներին և աշխատանքի անվտանգությանն ու առողջությանը: ԱԿԸ-ն սահմանում է աշխատանքի կառավարման դերերն ու պարտականությունները, ներառյալ մշտադիտարկումը՝ նպաստելով ՀՀ օրենսդրության և ԲՍՍ2-ի պահանջների հետևողական կիրառմանը:

ԱԿԸ-ն կիրականացվի Ծրագրի ողջ շրջափուլի ընթացքում, Ծրագրի մեկնարկի հայտարարման պահից, ինչպես մանրամասն ներկայացված է ծրագրի Բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանում (ԲՍՀՊ):

3. ԱՆԴՐԱԴԱՐՁ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԺԻՆ

Ծրագրի աշխատողների տեսակները. Ծրագիրը ներառում է գործունեության երկու լայն տեսակ՝ տեխնիկական աջակցություն և ենթակառուցվածքային ներդրումներ: Ծրագիրը նախատեսում է հետևյալ տեսակի աշխատողների ներգրավում առաջարկվող գործողություններն իրականացնելու նպատակով.

ա. Անմիջական աշխատողներ. Ծրագիրն իրականացնող գործակալության կողմից ուղղակիորեն վարձված կամ ներգրավված մարդիկ են՝ Ծրագրին առնչվող աշխատանքներն իրականացնելու նպատակով: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ) կունենա հատուկ թիմ՝ Ծրագրի թիմ (ԾԹ)՝ Ծրագրի ամենօրյա գործունեությունը վարելու համար:

բ. Պայմանագրային աշխատողներ. մարդիկ, որոնք աշխատանքի են ընդունվել կամ ներգրավված են երրորդ անձանց[8] միջոցով՝ ծրագրի հիմնական գործառույթներին առնչվող աշխատանք կատարելու համար: ՀՏԶՀ-ն կընտրի Համաշխարհային բանկի մրցութային ընթացակարգերի միջոցով և պայմանագրեր կկնքի հետևյալի հետ.

- Անհատ խորհրդատուներ՝ Բաղադրիչ 1-ի ներքո ԿԶԾ-ներ մշակելու և ինստիտուցիոնալ հզորացման և ներուժի զարգացման ՏԱ տրամադրելու համար;
- Նախագծող ընկերություններ՝ Բաղադրիչ 2-ի ներքո տարբեր ենթածրագրերի նախագծեր մշակելու, բնապահպանական և սոցիալական ուսումնասիրություններ իրականացնելու, ներառյալ շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման (ԲՍԱԳ) հաշվետվությունների պատրաստում, անհրաժեշտության դեպքում տարաբնակեցման պլաններ (ՏՊ), տեղանքին բնորոշ ԲՍԿՊ-ներ և այլ հաշվետվությունների մշակումը;
- Շինարարական ընկերություններ շինարարական աշխատանքները իրականացնելու նպատակով, որոնք կհամապատասխանեն ԲՍԿՊ-ների և ԱԿԸ-ի պահանջներին;
- Տեխնիկական վերահսկողության ընկերություններ վերահսկելու Կապալառուների գործունեությունը, աշխատանքների համապատասխանությունը տեխնիկական, բնապահպանական, սոցիալական, առողջության և անվտանգության պահանջներին:

Կարող են լինել ենթակապալառուներ, որոնց աշխատողները կդասվեն նույն կատեգորիային և կլինեն վարձող կապալառուների պատասխանատվության ներքո:

գ. Առաջնային մատակարարներ. առաջնային մատակարարներն այն մատակարարներն են, ովքեր Ծրագրի հիմնական գործառույթների իրականացման համար պահանջվող ապրանքներ և նյութեր են մատակարարում շարունակական հիմունքներով: Առաջնային մատակարարի կողմից վարձված աշխատողը առաջնային մատակարարի աշխատակից է:

դ. Համայնքային աշխատողներ. ներառում են տեղական համայնքի անդամներին, որոնք իրականացնում են համայնքային աշխատանք որպես կամավոր ներդրում ծրագրին: Համայնքների ղեկավարների կողմից կստեղծվեն նաև տեղական աշխատանքային խմբեր (ՏԱԽ), որոնք կներառեն տեղացի ներկայացուցիչներ, այդ թվում՝ համայնքների ղեկավարներ, համայնքապետարանի ներկայացուցիչներ, տեղական ՀԿ-ների, առաջադրված ակտիվ բնակիչների և մասնավոր հատվածի ներկայացուցիչներ: ՏԱԽ-ի

- գործունեության համակարգումը կիրականացվի տվյալ մարզի Համայնքի հետ կապի

[8] Երրորդ կողմը կարող է ներառել կապալառուների, ենթակապալառուների, գործակալների կամ միջնորդների

համակարգողի կողմից,

- անդամները կունենան համայնքային աշխատանքի կամ հասարակական գործունեության առնվազն մեկ տարվա փորձ,

- կազմում ներգրավումը կլինի բացառապես կամավորական սկզբունքով՝ բացառելով բռնի /ստիպողական աշխատանքը,

- կազմում կարող են ներգրավվել միայն 18 տարին լրացած անձիք:

Աշխատողների թիվը. Ծրագրի նախապատրաստման ընթացքում իրականացվել է Ծրագրի աշխատողների կանխատեսված գնահատում՝ հիմնվելով Ծրագրի իրականացման համար պահանջվող ուղղակի՝ ԾԹ կազմի վրա, ներառյալ վերահսկող ինժեներները՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների հնարավոր ծավալները, դրանց աշխարհագրական բաշխումը և ինժեներական լուծումները: Տեխնիկական աջակցության նպատակով պահանջվող մարդկային ռեսուրսների թիվը հետագայում կհաստատվեն, երբ հստակ որոշվեն միջամտությունները: Հետևյալ աղյուսակը (Աղյուսակ 1) ուրվագծում է Ծրագրի աշխատողների կանխատեսվող թիվը գործունեության յուրաքանչյուր խմբի համար: Այս փուլում պայմանագրային աշխատողների թիվը հնարավոր չէ գնահատել: Համապատասխանաբար, աղյուսակը կլրացվի հետագա փուլերում՝ նոր կապալառուներով և ենթակապալառուներով, որոնք կներգրավվեն տարբեր ենթաբաղադրիչների իրականացման համար:

Աղյուսակ 1: Ծրագրի աշխատողները

Գործունեություն	Անմիջական աշխատողներ	Պայմանագրային աշխատողներ	Համայնքային աշխատողներ
Ծրագրի կառավարում (ԾԿ)			
• Ծրագրի ամենօրյա կառավարում և վերահսկում	ՀՏՋՀ-ում Ծրագրի թիմը (ԾԹ)[9] 18	-	-
Տեխնիկական աջակցության			
• Նախագծի ուսումնասիրություններ, ներառյալ տեխնիկատնտեսական հիմնավորման և մանրամասն նախագծի պատրաստում	ՀՏՋՀ	Ընկերություններ, որոնք վարձվում են տեխնիկատնտեսական հիմնավորման և մանրամասն նախագծի պատրաստման համար	ՏԱԽ
• Քաղաքականության և կանոնակարգերի մշակում	ՀՏՋՀ	Անհատ խորհրդատու	ՏԱԽ
• Ներուժի զարգացում, ներառյալ շահագործման և պահպանման (ՇՆՊ)	ՀՏՋՀ	Անհատ խորհրդատու	-

[9] ՀՏՋՀ-ի կողմից առաջարկվող Ծրագրի թիմի անձնակազմի թիվը

աջակցություն			
Աշխատանքային գործողություններ			
Հիմնական ենթակառուցվածքի և ծառայությունների վերականգնում			
• Զբոսաշրջային վայրերի հասանելիության բարելավում (մոտեցնող ճանապարհներ, ավտոկայանատեղի, փողոցային լուսավորություն և այլն)	ՀՏԶՀ	Շինարարական աշխատանքների պայմանագրեր	ՏԱԽ
• Զբոսաշրջային ծառայությունների և տարածքային ենթակառուցվածքների բարելավում, ինչպես օրինակ խմելու ջրի մատակարարում	ՀՏԶՀ	Շինարարական աշխատանքների պայմանագրեր	ՏԱԽ
• Կոյուղու համակարգի նորացում և անձրևաջրերի հեռացման կառավարում	ՀՏԶՀ	Շինարարական աշխատանքների պայմանագրեր	ՏԱԽ
• Փողոցային լուսավորության և անվտանգության բարելավում	ՀՏԶՀ	Շինարարական աշխատանքների պայմանագրեր	ՏԱԽ
Զբոսաշրջային գրավչությունների բարելավում և տրամադրում			
• Աջակցություն «կանաչ» հաստատություններին	ՀՏԶՀ	Շինարարական աշխատանքների պայմանագրեր	ՏԱԽ
• Թանգարանների և մշակութային ժառանգության արժեքների վերականգնում	ՀՏԶՀ	Շինարարական աշխատանքների պայմանագրեր	ՏԱԽ

Ծրագրի աշխատողների բնութագիրը. բոլոր աշխատողները պետք է լինեն առնվազն 18 տարեկան: Աշխատանքի ընդունման գործընթացի շրջանակներում կստեղծվի տարիքի ստուգման մեխանիզմ:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը նախատեսում է հատուկ պայմաններով աշխատանքի ընդունել մինչև 18 տարեկան (14-ից 18 տարեկան) անձանց: Որոշ դրույթներ ներկայացված են ստորև.

- 18 տարին չլրացած անձանց համար փորձաշրջան չի նախատեսվում, հոդված 91,

- Աշխատաժամանակի կրճատ տևողություն սահմանվում է՝ տասնչորսից մինչև տասնվեց տարեկան աշխատողների համար՝ շաբաթական 24 ժամ և տասնվեցից մինչև տասնութ տարեկանների համար՝ շաբաթական 36 ժամ, հոդված 140.

- Արտաժամյա աշխատանքներին չեն ներգրավվում, հոդված 144,

- Գիշերային աշխատանքի ներգրավել չի թույլատրվում, հոդված 148,

- Տրամադրվում է լրացուցիչ 30 րոպե ընդմիջում 4 ժամ աշխատանքից հետո, հոդված 153,

- Պահանջվում է ծնողի գրավոր համաձայնությունը, եթե աշխատանքի է ընդունվում 16 տարին չլրացած անչափահաս քաղաքացին, հոդված 89:

Աշխատանքներում կարող են ներգրավված լինել աշխատանքային միգրանտներ (ներքին կամ արտերկրյա), որոնք կաշխատեն ծրագրի շրջանակներում՝ թե՛ որպես որակավորված և թե՛ որպես չորակավորված աշխատողներ: Նրանց զբաղվածության բնույթը և թիվը կհստակեցվեն աշխատանքների իրականացման ընթացքում:

Ծրագիրը կընդլայնի կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների և անապահով տնային տնտեսությունների զբաղվածության հնարավորությունները:

Աշխատանքային պահանջների ժամանակացույց. Ակնկալվում է, որ ՀՏԶՀ-ի կողմից ԶՄԵԾ-ի իրականացման համար նշանակված հիմնական անձնակազմը ներգրավված կլինի Ծրագրի ողջ ընթացքում: Աշխատողների այլ կատեգորիաներ, ներառյալ պայմանագրային աշխատողները, կներգրավվեն ենթածրագրի մակարդակով հատուկ գործողությունների համար:

Ցուրտ ամիսներին շինարարական աշխատանքների դադարներ կարող են լինել, օրինակ՝ Գյումրիում և Գորիսում ձմռան ցուրտ եղանակին դժվար կլինի որոշ աշխատանքներ կատարել (նոյեմբերի 10-ից մարտի 20-ը ժամանակահատվածում, որը կարող է ավելի երկար լինել): Որոշ շինարարական աշխատանքների համար պահանջում է, որպեսզի ջերմաստիճանը +5˚C-ից բարձր լինի, ինչպես օրինակ՝ ասֆալտապատման աշխատանքները: Սրանք վերաբերում են Բաղադրիչ 2-ի շրջանակներում իրականացվող աշխատանքներին: Մինչդեռ Բաղադրիչ 1-ի, ինչպես նաև Բաղադրիչ 2-ի շրջանակներում ինստիտուցիոնալ հզորացման և կարողությունների զարգացման աշխատանքները կշարունակվեն տարվա բոլոր եղանակներին:

Ձմեռային ժամանակահատվածում սեզոնային կամ պատահական աշխատողների թիվը կնվազի, քանի որ ցուրտ եղանակին հնարավոր միջամտությունների թիվը սահմանափակ է:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 152-րդ հոդվածը նախատեսում է լրացուցիչ ընդմիջումներ բացօթյա շինարարական աշխատանքներով զբաղվող աշխատողների համար՝ -10 ˚C-ից ցածր և +40 ˚C-ից բարձր ջերմաստիճանի դեպքում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 100-րդ հոդվածը նախատեսում է սեզոնային պայմանագրեր կնքելու դեպքեր այն աշխատանքների համար, որոնք կլիմայական պայմաններից ելնելով չեն կարող կատարվել ամբողջ տարվա ընթացքում: Նման պայմանագրերը չեն գերազանցում 8 ամիսը: Սեզոնային համարվող աշխատանքների ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 25.08.2005թ. թիվ 1480-Ն որոշմամբ: Սեզոնային աշխատանքների օրինակները, որոնք հնարավոր չէ իրականացնել ցուրտ եղանակին, հետևյալն են՝ ճանապարհաշինություն և ասֆալտապատում, ենթակառուցվածքների բարելավման աշխատանքներ՝ ներառյալ ստորգետնյա մալուխների տեղադրում, ինժեներական հետազոտություններ՝ ներառյալ հորատում, տեղագրություն և այլն:

Աշխատանքային օրենսգիրքը չի նախատեսում օրավարձով պայմանագրերի կնքում: Պայմանագրերը կարող են կնքվել ժամանակավոր՝ 2 ամիս ժամկետով, իսկ վճարումները կարող են իրականացվել օրական՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այնուամենայնիվ, շինարարական կապալառուները վարձում են, այսպես կոչված, «օրավարձով» պատահական աշխատողների որակավորում չպահանջող աշխատանքի համար՝ առանց պաշտոնապես գրանցելու: Այսպիսով, նման աշխատողների իրավունքները բավականին հաճախ ոտնահարվում են:

Կարող են լինել այլ աշխատողներ, ովքեր ընդհատումներով կիրականացնեն փորձագիտական խորհրդատվություն և հսկողություն:

4. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՈՏԵՆՑԻԱԼ ՎՏԱՆԳՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագրի տարածքները. Ծրագրում ընդգրկված է թվով 7 կլաստեր՝ Արենիի, Դիլիջանի, Դվինի, Եղեգիսի, Գորիսի, Գյումրու և Ջերմուկի կլաստերները։

Արենի. Արենիի կլաստերը գտնվում է ՀՀ Վայոց Ձորի մարզում, Եղեգնաձորից 12 կմ հարավ-արևելք և մայրաքաղաք Երևանից 110 կմ հեռավորության վրա։

Գյուղի կլիման չոր է, ձմեռը՝ չափավոր ցուրտ, ոչ երկար, գարունը՝ տաք, երկար ու խոնավ, ամառը՝ շոգ, չոր ու երկար։ Գերակշռում է մշտական պարզ եղանակ, աշունը տաք է, օրերը՝ քիչ ամպամած։

Դիլիջան. Դիլիջանի կլաստերը գտնվում է ՀՀ Տավուշի մարզում։

Դիլիջանը գտնվում է ծովի մակարդակից 1500 մետր բարձրության վրա։

Դիլիջանի կլիման ամռանը զով է, ձմռանը՝ ցուրտ՝ ձյան տեսքով։ Իր լեռնային կլիմայով Դիլիջանը թթվածնային բարենպաստ ռեժիմով, յուրահատուկ լանդշաֆտային առանձնահատկություններով և բուժիչ հանքային ջրով քաղաք-առողջարան է։

Դվին. Հայաստանի միջնադարյան Դվին մայրաքաղաքի ավերակները գտնվում են Վերին Դվին, Հնաբերդ, Վերին Արտաշատ, Նորաշեն, Այգեստան գյուղերի տարածքներում՝ Երևանից մոտ 30 կմ հարավ։ Ծրագրով նախատեսված աշխատանքները կիրականացվեն Հնաբերդի վարչական տարածքում։ Հնաբերդ գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում՝ Արտաշատ քաղաքից մոտ 5 կմ հյուսիս-արևելք։

Կլիման շատ չոր է։ Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարի միջին ջերմաստիճանը տատանվում է -3-ից -5°C։ Ամառը երկար է, մայիսից հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմաստիճանը հասնում է 24-ից 26 °C, իսկ առավելագույնը՝ 42 °C։ Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը։ Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300 մմ է։ Բնական լանդշաֆտները տափաստաններ են, որոնք ոռոգման ընթացքում վերածվել են կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի։

Եղեգիս. Եղեգիսի կլաստերը գտնվում է երկրի հարավ-արևելքում, ՀՀ Վայոց Ձորի մարզում։ Համայնքը բաղկացած է մի խումբ բնակավայրերից, վարչական կենտրոնը Շատին գյուղն է։

Համայնքը գտնվում է ծովի մակարդակից 1640-1690 մ բարձրության վրա։ Տարեկան միջին տեղումները 63մմ են, հունվարի միջին ջերմաստիճանը՝ -8◦C, հուլիսինը՝ +29◦C։

Բնակավայրերը գտնվում են Շատին համայնքի կենտրոնից 4-23կմ հեռավորության վրա։ Շատինը գտնվում է մարզկենտրոն Եղեգնաձորից 12 կմ, իսկ մայրաքաղաք Երևանից 127 կմ հեռավորության վրա։

Գորիս. Գորիսը քաղաք է Սյունիքի մարզի հյուսիս-արևելյան մասում, Հայաստանի հարավում։ Գտնվում է Գորիս գետի հովտում (Վարարակն) մայրաքաղաք Երևանից 235 կմ, մարզկենտրոն Կապանից՝ 67 կմ հեռավորության վրա։ Քաղաքի միջին բարձրությունը ծովի մակարդակից 1398 մ է։

Գորիս գետը Որոտան գետի ամենամեծ ձախափնյա վտակներից է։ Գորիս գետի երկարությունը 29 կմ է, դրենաժային ավազանը՝ 146 կմ²։ Գետը սկիզբ է առնում Մեծ Իշխանասար լեռնաշղթայի վերին լանջերից՝ 2800 մ բարձրության վրա։ Ունի 26 վտակ։

Դեկտեմբերի 20-ից ձևավորվում է կայուն ձնածածկ, մարտի 20-ից սկսվում է ձնհալքի շրջանը: Կլիման չափավոր լեռնային է, բարձր բարձունքներում խիստ, երկար ձմեռներով: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը 4°C է: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին տատանվում է –2°C (ցածրադիր վայրերում) –10°C (Իշխանասարի վերին հատվածում), իսկ հուլիսին՝ համապատասխանաբար 22°C–ից 10°C: Օդի առավելագույն ջերմաստիճանը 28°C է, նվազագույնը՝ –30°C: Միջին հարաբերական խոնավությունը 70% է: Տարեկան գոլորշիացումը 375 մմ է:

Գյումրի. Գյումրին քաղաքային համայնք է, իր մեծությամբ երկրորդը ՀՀ-ում, այն հանդիսանում է ՀՀ Շիրակի մարզկենտրոնը և գտնվում է երկրի հյուսիս-արևմուտքում:

Գյումրին գտնվում է մայրաքաղաք Երևանից 126 կիլոմետր հյուսիս՝ Շիրակի բարձրավանդակի կենտրոնական մասում: Այն գտնվում է ունի մոտավոր 1550 մետր բարձրություն ծովի մակարդակից 1500 մետր բարձրության վրա: Քաղաքի արևմտյան արվարձաններով հոսում է Ախուրյան գետը: Շիրակի սարահարթը արևելքից շրջապատված է Փամբակի լեռներով, իսկ հարավից՝ Արագածի հրաբխային լեռնաշղթայով: Քաղաքին հարող հողատարածքները հարուստ են տուֆով, բազալտով և կավով:

Գյումրին ունի խոնավ մայրցամաքային կլիմա, որը բնութագրվում է ցրտաշունչ և ձնառատ ձմեռներով, որտեղ նվազագույն ջերմաստիճանը ծայրահեղ ժամանակներում կարող է իջնել մինչև -41°C: Մյուս կողմից, Գյումրիում ամառը համեմատաբար շոգ է և ջերմաստիճանը հասնում է մինչև 38°C: Տարեկան տեղումների քանակը կազմում է միջինը 486 միլիմետր:

Ջերմուկ. Ջերմուկը լեռնային առողջարանային քաղաք է Հայաստանի հարավում, Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի կենտրոնը, մարզկենտրոն Եղեգնաձորից 53 կմ դեպի արևելք ճանապարհի վրա: Քաղաքը հայտնի է իր տաք աղբյուրներով և քաղաքում շշալցված հանքային ջրերի ապրանքանիշերով: Այն գրավիչ է իր մաքուր օդով, ջրվեժով, արհեստական լճերով, քայլելու արահետներով, շրջակա անտառներով և հանքային ջրերի լողավազաններով:

Քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 2080 մ բարձրության վրա, Վայոց ձորի լեռներում, թավուտ անտառների մեջ, Արփա գետի կիրճով երկու մասի բաժանված սարահարթի վրա, Երևանից 170 կմ հարավ-արևելք: Քաղաքում պարուրում են հյուսիսից Վարդենիսի լեռնաշղթան, հարավից՝ Վայքի լեռնաշղթան: Շրջապատող լեռների բարձրությունը տատանվում է 2500-ից 3500 մետրի սահմաններում, բոլորը ծածկված են անտառներով և ալպյան մարգագետիններով:

Բնորոշ վտանգներ. Բաղադրիչ 2-ի ներքո շինարարական աշխատանքների իրականացումը ենթադրում է հնարավոր աշխատանքային ընդհանուր ռիսկեր, ներառյալ աշխատանքի անվտանգությանը և առողջությանը (ԱԱԱ) վերաբերող և/կամ դրանցով պայմանավորված որոշ գործոններ: Որոշ վտանգավոր նյութերի, ֆիզիկական վտանգների ազդեցությանը ենթարկվելը պոտենցիալ է ներկայացնում վթարի կամ վնասվածքի կամ հիվանդության համար՝ մեխանիկական գործողությունների կամ աշխատանքային գործունեության ընթացքում կրկնվող ազդեցության պատճառով: Ֆիզիկական վտանգների միանգամյա ազդեցությունը կարող է հանգեցնել վնասվածքների լայն շրջանակի՝ սկսած աննշան դեպքից և բժշկական օգնությունից մինչև հաշմանդամություն, աղետալի և/կամ մահացու ելք: Երկարատև բազմաթիվ ազդեցություններ կարող են հանգեցնել վնասվածքների, որոնք համադրելի են նշանակությամբ և հետևանքներով: Ռիսկերը կապված են նաև աշխատանքային պայմանների հետ. չափազանց շոգ կամ չափազանց ցուրտ եղանակին աշխատելը, շոգ եղանակին օձերի կամ անտառի մոտ գտնվող շինարարական հրապարակի դեպքում վայրի կենդանիների հետ փոխազդեցությունը:

Վերոնշյալ ռիսկերը կգնահատվեն տեխնիկատնտեսական հիմնավորումների և մանրամասն նախագծերի պատրաստման շրջանակում: Կմշակվեն մեղմացնող միջոցառումներ որպես նախագծի մաս՝ ներառյալ աշխատանքների բնութագրերը և ժամանակացույցը, տեղակայումը, անձնակազմի որակավորումը և այլն:

Ծրագրին բնորոշ ռիսկեր. Ծրագրի գործունեության հետ կապված աշխատանքային ռիսկերը գնահատվում են որպես չափավոր և կարող են մեղմացվել Միջազգային արդյունաբերական լավ գործելակերպերի (ՄԱԼԳ/GIIP) միջոցով, ինչպես սահմանված է Ծրագրի Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակում (ԲՍԿՇ):

Ռիսկեր անմիջական աշխատողների համար. Ակնկալվում է, որ անմիջական աշխատողների հետ կապված աշխատանքային ռիսկերը ցածր կլինեն՝ հաշվի առնելով այն փաստը, որ Ծրագիրն իրականացնող կազմակերպությունները, մասնավորապես, ՀՏՋՀ-ն, բարձր տեղեկացվածություն ունեն ազգային աշխատանքային օրենսդրության և աշխատանքային ազգային օրենսգրքի դրույթների մասին: Ավելին, անմիջական աշխատողների կողմից իրականացվելիք աշխատանքի տեսակը չի ենթադրում բարձր խոցելիություն աշխատանքային իրավունքների չարաշահման կամ ԱԱԱ ռիսկերի նկատմամբ:

Ռիսկեր պայմանագրային աշխատողների համար. Ռիսկերը կապված են և/կամ մեծանում են հետևյալ գործոններով պայմանավորված.

- վատ կազմակերպված տնտեսություն,
- գոյություն ունեցող ենթակառուցվածքների ապամոնտաժում և հեռացում,
- լարերի և մալուխների, գեներատորների, տրանսֆորմատորների տեղադրում,
- ծանր տեխնիկայի օգտագործում,
- բարձրության վրա աշխատանք,
- աղմուկի և փոշու ազդեցություն,
- ֆիզիկական ազդեցության վտանգներ (ընկնող առարկաներ),
- վտանգավոր նյութերի (ցեմենտ, վառելիք, ներկեր, լուծիչներ և հատկապես ասբեստ) ազդեցություն,
- գործիքների և մեքենաների օգտագործման և էլեկտրականության հետ աշխատանքների ընթացքում էլեկտրահարման վտանգներ:

Ծրագրի Բաղադրիչ 2-ի գործունեության հետ կապված ընդհանուր աշխատանքային ռիսկերը, որոնք հնարավոր են մուտքի ճանապարհների և ավտոկայանատեղերի կառուցման, խմելու ջրի մատակարարման, կոյուղու համակարգերի արդիականացման, հեղեղաջրերի կառավարման, լուսավորության տեղադրման, շենքերի/թանգարանների վերականգնման և այլ աշխատանքներով պայմանավորված, ամփոփված են ստորև՝

Պտտվող ու շարժվող սարքավորում. վնասվածք կամ մահ կարող է առաջանալ մեքենայի մասերի թակարդում հայտնվելուց, խճճվելուց կամ հարվածելուց՝ աննկատ շարժման պատճառով սարքավորումների անսպասելի գործարկման կամ շահագործման ընթացքում մեքենայի մասերի թակարդում հայտնվելը, խճճվելը կամ հարված ստանալը կարող է հանգեցնել վնասվածքի կամ մահվան:

Աղմուկ. ոչ մի աշխատող չպետք է ենթարկվի 85 դԲ(A)-ից ավելի աղմուկի՝ օրական 8 ժամից ավելի առանց լսողության պաշտպանության: Բացի այդ, ոչ մի անպաշտպան ականջ չպետք է ենթարկվի 140 դԲ(C)-ից ավելի բարձր ձայնային ճնշման մակարդակի (ակնթարթային):

Թրթռում. ձեռքի և բազկի թրթռումների ազդեցություն, ինչպիսիք են ձեռքի էլեկտրական գործիքները, կամ ամբողջ մարմնի թրթռումները այն մակերեսներից, որոնց վրա աշխատողը կանգնած կամ նստած է:

Էլեկտրական. բաց կամ անսարք էլեկտրական սարքերը, ինչպիսիք են անջատիչները, վահանակները, մալուխները, լարերը և ձեռքի գործիքները, կարող են լուրջ վտանգ ներկայացնել աշխատողների համար: Վերգետնյա լարերին կարող են դիպչել մետաղական սարքերը, ինչպիսիք են հենասյուները կամ սանդուղքները, ինչպես նաև մետաղական մասերով մեքենաները: Մեքենաների կամ հողակցված մետաղական առարկաների մոտով անցնող վերգետնյա լարերը կարող են լարերի և առարկայի միջև աղետների հանգեցնել՝ առանց փաստացի շփման:

Վտանգներ աչքերի համար. Տարաբնույթ արդյունաբերական գործունեության ընթացքում պինդ մասնիկները և/կամ հեղուկ քիմիական ցողացիրը կարող են ընկնել աշխատողի աչքի մեջ՝ առաջացնելով աչքի վնասվածք կամ մշտական կուրություն:

Եռակցում / Տաք աշխատանք. Եռակցման ընթացքում արձակվում է չափազանց պայծառ և ինտենսիվ լույս, որը կարող է լրջորեն վնասել աշխատողի տեսողությունը: Ծայրահեղ դեպքերում կարող է առաջանալ կուրություն: Բացի այդ, եռակցումը կարող է առաջացնել վնասակար գոլորշիներ, որոնց երկարատև ազդեցությունը կարող է առաջացնել լուրջ քրոնիկական հիվանդություններ:

Արդյունաբերական մեքենաների վարումն ու երթևեկությունը տարածքում. վատ պատրաստված կամ անփորձ արդյունաբերական մեքենաների վարորդները մեծացնում են այլ տրանսպորտային միջոցների, հետիոտների և սարքավորումների հետ վթարի ռիսկը: Արդյունաբերական և առաքման մեքենաները, ինչպես նաև տեղում գտնվող մասնավոր մեքենաները նույնպես ներկայացնում են բախման հավանականություն:

Աշխատանքային միջավայրի ջերմաստիճանը. Շոգ կամ ցուրտ աշխատանքային միջավայրը ներսում կամ դրսում կարող է հանգեցնել ջերմային սթրեսի հետ կապված վնասվածքների կամ մահվան:

Էրգոնոմիկա, կրկնվող շարժում, ձեռքով բեռնաթափում. Էրգոնոմիկ գործոնների հետևանքով առաջացած վնասվածքները, ինչպիսիք են կրկնվող շարժումը, գերլարումը և ձեռքով աշխատանքը, պահանջում են երկարատև և կրկնվող միջամտություններ վերականգնման համար, որոնք սովորաբար տևում են շաբաթներ կամ ամիսներ:

Աշխատանք բարձրության վրա. Անկումը կանխարգելող, պաշտպանական միջոցառումներ պետք է իրականացվեն, երբ աշխատողը կարող է վայր ընկնել երկու մետրից ավել բարձրությունից՝ շահագործվող մեքենաների վրա, ջրի կամ այլ հեղուկի մեջ, վտանգավոր նյութերի մեջ կամ աշխատանքային տարածքում առկա խոռոչի/բացվածքի միջով:

Լուսավորություն. Աշխատանքային տարածքի լույսի ինտենսիվությունը պետք է համապատասխանի գտնվելու վայրի և գործունեության տեսակի ընդհանուր նպատակին և անհրաժեշտության դեպքում լրացվի աշխատանքային տեղամասի հատուկ լուսավորությամբ:

Օդի որակ. Աշխատավայրում աղտոտող նյութերի արտանետման պատճառով օդի վատ որակը կարող է հանգեցնել աշխատողների հնարավոր շնչառական ուղիների գրգռման, անհանգստության կամ հիվանդության:

Հրդեհ ու պայթյուններ. Դյուրավառ նյութերի կամ գազերի բռնկման հետևանքով առաջացած հրդեհները և կամ պայթյունները կարող են հանգեցնել գույքի կորստի, ինչպես նաև ծրագրի աշխատողների հնարավոր վնասվածքների կամ մահվան:

Ասբեստ պարունակող նյութեր (ԱՊՆ). Պետք է խուսափել ԱՊՆ օգտագործումից նոր շենքեր կառուցելիս և վերականգնման կամ վերանորոգման աշխատանքներ իրականացնելիս:

Աղյուսակ 2. Աշխանաքին առնչվող ռիսկեր և դրանցից խուսափելու առաջարկություններ

Աշխատանքի ռիսկեր	**Ծրագրի գործունեությունը**	**Առաջարկություններ խուսափելու համար**
Պտտվող ու շարժվող սարքավորում	Բաղադրիչ 2-ի ներքո շինարարական աշխատանքներ	Բաց կամ պաշտպանված շարժական մասեր ունեցող սարքավորումների/ մեքենաների անջատում վահանակից, մեկուսացում և հոսանքազերծում (Կողպված և համապատասխան պիտակով մակնշված)
Աղմուկ	Ենթակառուցվածքների քանդում, աղմկոտ սարքավորումների երկարատև կիրառում, հորատումներ	Լսողության պաշտպանիչ միջոցների օգտագործումը պարտադիր է, երբ 8 ժամ շարունակ ձայնի մակարդակը հասնում է 85 դԲ(A), ձայնի առավելագույն մակարդակը հասնում է 140 դԲ(C) կամ միջին առավելագույն ձայնի մակարդակը հասնում է 110 դԲ(A-ի): Լսողության պաշտպանիչ սարքերը պետք է նվազեցնեն ականջի ձայնի մակարդակը մինչև առնվազն 85 դԲ(A):
Թրթռում	Շինարարական աշխատանքներ, որոնք պահանջում են ձեռքով էլեկտրական սարքերի օգտագործում	Թրթռումը պետք է վերահսկվի սարքավորումների ընտրության, ամորտիզացնող բարձիկների կամ սարքերի տեղադրման և ազդեցության տևողության սահմանափակման միջոցով:
Էլեկտրական	Բոլոր տեսակի շինարարական աշխատանքների ընթացքում, որոնք պահանջում են էլեկտրական սարքերի, լարերի և մալուխների օգտագործում	Հոսանքին միացված բոլոր էլեկտրական սարքերի և լարերի մակնշումը նախազգուշացնող նշաններով՝ սարքերը մնում են կողպված (հոսանքազերծված և բաց վիճակում կարելի է թողնել կառավարելի փականի առկայության դեպքում) և պիտակով մակնշված (կողպեքի վրա տեղադրված

		նախազգուշական նշան) սպասարկման կամ վերանորոգման ընթացքում՝ բոլոր էլեկտրական լարերը, մալուխները և ձեռքի էլեկտրական գործիքներ ստուգելուց հետո՝ քայքայված կամ բաց լարերը հայտնաբերեելու համար, և հետևելով արտադրողի առաջարկություններին՝ շարժական ձեռքի գործիքների առավելագույն թույլատրելի աշխատանքային լարման համար, կրկնակի մեկուսացնել/հողանցել բոլոր էլեկտրական սարքավորումները, որոնք օգտագործվում են կամ կարող են թաց լինել, օգտագործելով սարքավորումները գետնանցման անջատիչով (GFI) պաշտպանված սխեմաներով, պաշտպանելով հոսանքի լարերը և երկարացման լարերը երթևեկության հետևանքով առաջացած վնասներից՝ պաշտպանելով կամ բարձրացնելով լարերը երթևեկելի հատվածից վերև:
Վտանգներ աչքերի համար	Բաղադրիչ 2-ի ներքո շինարարական աշխատանքներ	Մեքենայի պաշտպանիչ սարքերի կամ ցողման վահանների և/կամ դեմքի և աչքերի պաշտպանիչ սարքերի օգտագործում, ինչպիսիք են կողային պաշտպանիչ ակնոցները, ակնոցները և/կամ ամբողջ դեմքը պաշտպանող ակնոցները: Հատուկ անվտանգ գործառնական ընթացակարգեր (SOPs) կարող են պահանջվել հղկման գործիքների օգտագործման և/կամ հեղուկ քիմիական նյութերի հետ աշխատելու դեպքում:
Եռակցում/շոգ աշխատանք	Եռակցում պահանջող աշխատանքներ	Աչքերի պատշաճ պաշտպանության ապահովում, ինչպես օրինակ եռակցման ակնոցների և/կամ ամբողջ դեմքը պաշտպանող դիմակի/վահանի օգտագործումը եռակցման աշխատանքներ կատարող և օժանդակող ամբողջ

		անձնակազմի կողմից:
Արդյունաբերական փոխադրամիջոցների վարում և երթևեկություն տարածքում	Նյութերի փոխադրում, մեքենաների տեղաշարժ և շահագործում	Արդյունաբերական տրանսպորտային միջոցների վարման և տարածքում երթևեկության անվտանգության գործելակերպը ներառում է. արդյունաբերական տրանսպորտային միջոցների օպերատորների ուսուցում և լիցենզավորում մասնագիտացված տրանսպորտային միջոցներ վարելու համար, ինչպիսիք են ամբարձիչները, ներառյալ անվտանգ բեռնումը/ բեռնաթափումը, բեռների առավելագույն սահմանաչափը, և վարորդների բժշկական հսկողության ապահովումը:
Աշխատանքային միջավայրի ջերմաստիճանը	Բաղադրիչ 2-ի ներքո շինարարական աշխատանքներ, ներսի և դրսի աշխատանքներ	Աշխատանքային այլ վտանգներից պաշտպանվելու համար անձնական պաշտպանիչ միջոցների (ԱՊՄ) օգտագործումը կարող է առաջացնել, պատճառ դառնալ ջերմության հետ կապված հիվանդությունների համար: Աշխատանքային միջավայրում տնական ծայրահեղ բարձր ջերմաստիճաններից պետք է խուսափել ինժեներական հսկողության և օդափոխության միջոցով: Այն դեպքերում, երբ դա հնարավոր չէ, օրինակ՝ կարճատև բացօթյա աշխատանքի ժամանակ, պետք է իրականացվեն ջերմաստիճանի հետ կապված սթրեսի կառավարման ընթացակարգեր:
Էրգոնոմիկա, կրկնվող շարժում, ձեռքով բեռնաթափում	Բաղադրիչ 2-ի ներքո շինարարական աշխատանքներ	ԱԱԱ նման խնդիրները պետք է նվազեցվեն կամ վերացվեն՝ աշխատավայրի արդյունավետությունը պահպանելու նպատակով:
Աշխատանք բարձրության վրա	Շենքերի/ թանգարանների վերականգնում	Անկման կանխարգելման և պաշտպանության միջոցառումները պետք է իրականացվեն ամեն անգամ, երբ աշխատողը ենթարկվում

		է երկու մետրից ավելի բարձրությունից վայր ընկնելու վտանգի. գործող մեքենաների վրա/մեջ; ջրի կամ այլ հեղուկի մեջ; վտանգավոր նյութերի մեջ; կամ աշխատանքային տարածքում առկա խոռոչի/ բացվածքի միջով: Անկման կանխարգելման/աշտպանության միջոցառումներ կարող են կիրառվել նաև կոնկրետ դեպքում, երբ կա ավելի փոքր բարձրությունից ընկնելու վտանգ:
Լուսավորություն	Ներսի վերականգնման աշխատանքներ	Աշխատանքային տարածքի լուսավորության ինտենսիվությունը պետք է համապատասխանի գտնվելու վայրի և գործունեության տեսակի ընդհանուր նպատակին և անհրաժեշտության դեպքում լրացվի աշխատանքային տեղամասի հատուկ լուսավորությամբ:
Օդի որակ	Ներսի վերականգնման աշխատանքներ	Գործատուները պետք է համապատասխան միջոցառումներ ձեռնարկեն աշխատավայրում օդի որակը պահպանելու համար:
Հրդեհ և պայթյուններ	Բաղադրիչ 2-ի ներքո շինարարական աշխատանքներ, ներսի և դրսի աշխատանքներ	Կանխարգելման և վերահսկման ռազմավարությունները ներառում են դյուրավառ նյութերի պահպանումը բռնկման աղբյուրներից և օքսիդացնող նյութերից հեռու:
Ասբեստ պարունակող նյութեր (ԱՊՆ)	Քանդման և ապամոնտաժման աշխատանքներ Բաղադրիչ 2-ի ներքո	Գոյություն ունեցող ԱՊՆ-ով սարքավորումների/ շինությունների դեպքում պետք է մշակել ասբեստի կառավարման պլան, որը հստակ բացահայտում է այն վայրերը, որտեղ առկա է ԱՊՄ, նրա վիճակը (օրինակ՝ արդյոք այն փխրուն վիճակում է՝ մանրաթելեր բաց թողնելու հնարավորությամբ), դրա վիճակի մշտադիտարկման ընթացակարգերը, ԱՊՆ պարունակող վայրեր մուտք գործելիս վնասից խուսափելու համար, և անձնակազմի վերապատրաստում, որը կարող է

		շփվել նյութի հետ՝ վնասից և ազդեցությունից խուսափելու համար: Պլանը պետք է հասանելի լինի բոլոր այն անձանց, ովքեր ներգրավված են շահագործման և պահպանման աշխատանքներում: Շենքերում առկա ԱՊՆ-ի վերանորոգումը կամ հեռացումը պետք է իրականացվի միայն հատուկ պատրաստված անձնակազմի կողմից՝ հետևելով երկրի օրենսդրական պահանջներին, կամ դրանց բացակայության դեպքում՝ միջազգայնորեն ճանաչված ընթացակարգերին:

Քանի որ շինարարական աշխատանքները ներառում են վտանգավոր աշխատանքներ, 18 տարեկանից ցածր անձինք Ծրագրում աշխատանքի չեն ընդունվի: Սեռական շահագործման և չարաշահման և սեռական ոտնձգության (ՍՇՉ/ՍՈ) ռիսկը գնահատվում է որպես ցածր: Գնահատումը հիմնված է ազգային օրենսդրության վերանայման և երկրում ՍՇՉ/ՍՈ ասպեկտների վերաբերյալ առկա տեղեկատվության վրա:

Բացի այդ, հիմնվելով Հայաստանում շինարարական նախագծերի փորձի վրա՝ աշխատողների բողոքների և Աշխատանքային օրենսգրքի խախտումների մեծ մասը կապված է երկարաձգված աշխատաժամանակի, աշխատավարձի չվճարման, ոչ անվտանգ գործելակերպի հետ: Այն դեպքերում, երբ աշխատանքներում ներգրավված են 15-ից 18 տարեկան աշխատողներ, աշխատանքային պայմանների ռիսկի գնահատումը և ԱԱԱ միջոցառումների դրույթները և դրանց կիրարկումը նույնպես կարող են սահմանափակվել:

Առաջնային մատակարարման աշխատողներ. Եթե Ծրագրի իրականացման ընթացքում հայտնաբերվեն Ծրագրի մատակարարների հետ կապված զգալի ռիսկեր, բողոքների առկայության դեպքում, վերահսկողություն իրականացնող ընկերությունը պատասխանատու կլինի իրականացնելու պատշաճ ուսումնասիրություն առաջնային մատակարարման աշխատողների շրջանում (նրանք, ովքեր ապահովում են շինարարության համար հիմնական նյութեր, մասնավորապես հումք), ապահովելու, որ բացառվի հարկադիր և/կամ մանկական աշխատանք (Հայաստանի աշխատանքային օրենսգրքի համաձայն): Համապատասխան ուսումնասիրություն իրականացնելիս վերահսկողություն իրականացնող ընկերությունը.

- Տեղեկացնում է մատակարարին, որ հարկադրաբար չներգրավի մատակարարների և երեխաների,
- Հնարավորության դեպքում այցելի ընկերություն/գործարան և անցկացնի հարցազրույցներ հիմնական անձնակազմի հետ նրանց աշխատանքային պայմանների վերաբերյալ, ինչպես նաև ոչ պաշտոնական պատահական հարցազրույցներ աշխատողների հետ:

Համայնքային աշխատողներ. ՏԱԽ-ը ներգրավված կլինի Բաղադրիչ 1-ի ներքո ԿՁԾ-ների պատրաստման ողջ ընթացքում՝ որպես խորհրդատվական խումբ խորհուրդ տալու և ուղղորդելու ԿՁԾ-ների մշակման, միջամտությունների առաջնահերթության որոշման վերաբերյալ, ինչպես նաև մշակված վերջնական ԿՁԾ-ների հանդեպ տեղական մակարդակում սեփականության զգացմունքի բարձրացման

նպատակով: ՏԱԽ-ը նաև կծառայի որպես առանցքային օղակ տեղական համայնքների համար՝ տրամադրելու հետադարձ կապ կամ մտահոգություններ՝ կապված Բաղադրիչ 2-ի շրջանակներում շինարարական աշխատանքների նախապատրաստման, տեխնիկական նախագծման և իրականացման, ինչպես նաև աշխատանքի որակի հետ կապված հարցերի հետ՝ համագործակցելով ՀՏՋՀ-ի, կապալառուների և այլ շահագրգիռ կողմերի հետ: Բացի այդ, ՏԱԽ-ը պատասխանատու կլինի կլաստերներում իրականացվող գործողությունների առաջընթացի վերաբերյալ համայնքին կանոնավոր կերպով իրազեկելու և տեղական մակարդակում բողոքները կառավարելու համար:

5. ՀԱԿԻՐՃ ԱՆԴՐԱԴԱՐՁ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆԸ

ՀՀ աշխատանքային օրենսգիրքն (2001թ.) ընդհանուր առմամբ համահունչ է միջազգային լավ փորձին և համապարփակ է՝ Աղյուսակ 3-ում ամփոփված որոշ բացերով: Հատուկ դրույթները, որտեղ աջակցումը երաշխավորված է, ներառում է անապահով և խոցելի խմբերի պաշտպանությունը: Դրանք ներառում են օտարերկրյա աշխատողներ, կին աշխատողներ, սեռական ոտնձգությունների վտանգի տակ գտնվող աշխատողներ, տարբեր սեռական կողմնորոշման աշխատողներ:

Ինստիտուցիոնալ մակարդակում Աշխատանքային օրենսգիրքը և աշխատանքին առնչվող այլ համապատասխան կանոնակարգերը կիրարկելու և վերահսկելու պատասխանատվություն կրող հիմնական հաստատությունները ներառում են ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և Հայաստանի Հանրապետության Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմինը (ԱԱՏՄ): Այնուամենայնիվ, աշխատանքի տեսչական ծառայությունների վերջին բարեփոխումները հանգեցրին նրանց համապատասխան հանձնառությունների և կազմակերպչական կարողությունների փոփոխությունների: 2013 թվականին աշխատանքի և առողջապահական տեսչության գործառույթների միաձուլումից հետո աշխատանքի տեսուչները չունեն չհայտարարված ստուգումներ իրականացնելու հանձնառություն: 2015 թվականից աշխատանքային տեսուչ սահմանափակվել են միայն այն դեպքերով, երբ բողոքներ են լինում ԱԱԱ-ի խախտումների վերաբերյալ: ԱԱՏՄ-ն պետք է գործատուներին տեղեկացնի առաջիկա ստուգման մասին երեք աշխատանքային օր առաջ՝ այդպիսով սահմանափակելով աշխատանքի հետ կապված բոլոր խախտումները հայտնաբերելու նրանց հնարավորությունները: Ստուգումների ենթակա տարածքները նույնպես սահմանափակվում են իրավականորեն նախանշված ցուցակով, որոնք համապարփակ չեն ներառում խտրականության, երեխաների և հարկադիր աշխատանքի հետ կապված խնդիրները: 2022 թվականի դրությամբ ԱԱՏՄ-ում աշխատում էր 95 տեսուչ:

Ծրագրին առնչվող հատուկ ոլորտների գնահատումը ներկայացված է ստորև՝

ԱԿԸ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՒՄԵՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՅԻՆ ԵԼԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Աղյուսակ 3: Աշխատանքի և աշխատանքային պայմանների կանոնակարգման վերլուծություն

Մտահոգման ոլորտը	Դրույթներ	Վերլուծություն	Լրացուցիչ միջոցառումներ
Աշխատանքային պայմաններ և աշխատողների հարաբերությունների կառավարում			
Աշխատանքի պայմաններ	Աշխատանքային հարաբերությունների կողմերը կնքում են աշխատանքային պայմանագիր, որը ներառում է ստորև նշված աշխատանքային պայմանները: Գործատուն պարտավոր է աշխատանքի ընդունվելուց առաջ պատշաճ կերպով տեղեկացնել վարձու անձանց աշխատանքային պայմանների, ներքին կանոնների և կանոնակարգերի և այլ վարքագծի մասին:		
Առանց խտրականության հավասար հնարավորություն	Տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հնարավորությունների մասին օրենքը (2013թ.) արգելում է սեռով պայմանավորված խտրականությունն աշխատանքի մեջ:	Աշխատանքային օրենսգիրքը բացահայտորեն չի պահանջում հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրություն և չի ներառում ուղղակի և անուղղակի խտրականության սահմանումներ, որոնք այնուհետև կարգավորվեն այլ օրենքներով:	
Աշխատանքային ժամեր	Շաբաթական 40 ժամ - Աշխատանքային օրենսգիրքն արգելում է երկու օր անընդմեջ չորս ժամից ավելի պարտադիր արտաժամյա աշխատանքը և սահմանափակում է արտաժամյա աշխատանքը մինչև տարեկան 180 ժամ:		
Աշխատավարձ	Նվազագույն աշխատավարձի պահանջները կարգավորվում են «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքով		

	(թարմացվել է 2022 թ.)՝ ներառելով հիմնական աշխատավարձը և կատարված աշխատանքների համար լրացուցիչ վարձատրությունը: Աշխատավարձը ներառում է նաև վտանգավոր աշխատանքների համար նախատեսված, դժվարությունների համար նախատեսված նպաստները (հիմնական աշխատավարձի 30-50 տոկոսի սահմաններում): Աշխատավարձից պահումները կամ գանձումները ներառում են կանխավճարը, հաշվարկային սխալների պատճառով գերավճարները, գործուղումների կամ փոխանցումների համար կանխավճարների չծախսված և ժամանակին վերադարձված գումարները և աշխատողի պատճառած վնասների փոխհատուցումը (աշխատավարձի նվազեցումը չպետք է գերազանցի աշխատողի ամսական աշխատավարձի հիսուն տոկոսը):		
Արտաժամյա վարձատրություն	Արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար տրվում է լրացուցիչ աշխատավարձի չափից ոչ պակաս, քան ժամային դրույքի 50 տոկոսը, իսկ գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար՝ ժամային դրույքի 30 տոկոսից ոչ պակաս: Տոնական օրերին կատարված աշխատանքների համար վարձատրվում է ժամային (օրական) դրույքաչափի առնվազն կրկնապատիկը:		
Հանգստի	Աշխատանքային օրենսգիրքը ներառում է		

ժամանակահատվածներ	երկու հանգստյան օրերի դրույթներ նրանց համար, ովքեր աշխատում են շաբաթական հինգ օր և առնվազն մեկ օր վեցօրյա շաբաթվա ընթացքում: Չընդհատվող ամենօրյա հանգիստը չպետք է 11 ժամից պակաս լինի: Շաբաթական հանգիստը չպետք է 35 ժամից պակաս լինի: Հատուկ հանգամանքներում կարող են տրամադրվել երկարատև հանգստի ժամկետներ, ինչպիսիք են ծայրահեղ եղանակային պայմանները և/կամ աշխատավայրում վտանգները:		
Արձակուրդ	Վճարովի տարեկան օրերը սահմանվում են առնվազն 20 օր շաբաթական հինգ օր աշխատողների համար և 24 օր՝ շաբաթական վեց օր աշխատողների համար: Հղիության արձակուրդը տևում է առնվազն 140 օր, և լրացուցիչ օրեր տրամադրվում են հատուկ հանգամանքներում (այսինքն՝ ծանր ծննդաբերություն, մեկից ավելի երեխայի ծնունդ): Մոր (խորթ մոր), հոր (խորթ հոր), տատիկի, պապիկի կամ ընտանիքի այլ ազգականի (ներառյալ երեխայի խնամակալ նշանակված անձի) խնդրանքով երեխային փաստացի խնամող անձին տրամադրվում է արձակուրդ մինչև երեխայի երեք տարեկանը:		
Ապահովագրություն	Թեև ՀՀ-ն վավերացրել է Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) հիմնական կոնվենցիաները, Աշխատանքային օրենսգիրքը չի ընդգրկում դրույթներ առողջության պարտադիր ապահովագրության վերաբերյալ, քանի որ	Հայաստանի աշխատանքային օրենսգրքում առկա են բացեր առողջության ապահովագրության առումով	

	երկրում դեռևս չի գործում առողջության պարտադիր ապահովագրության համարկարգը		
Կոլեկտիվ բանակցություններ	Աշխատողներն իրավունք ունեն ստեղծելու և միանալու անկախ արհմիություններին և կատարել կոլեկտիվ բանակցություններ:		
Աշխատանքային հարաբերությունների դադարեցում	Դադարեցման հատուկ պայմանները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով: Գործատուների կողմից կամայական դադարեցումը արգելվում է:	Թեև Աշխատանքային օրենսգիրքը պահանջում է աշխատանքից ազատվելու մասին ծանուցում և օրենքով սահմանված վճարումներ վճարել աշխատողին աշխատանքից ազատման օրը կամ դրանից առաջ, կոնկրետ ժամկետներ ամբողջությամբ նախատեսված չեն դադարեցման բոլոր հիմքերի համար:	
Աշխատուժի պաշտպանություն			
Նվազագույն տարիք	Լիաժամկետ աշխատանքի համար նվազագույն աշխատանքային տարիքը 16 տարին է, և օրենքն արգելում է երեխաների աշխատանքի վատթարագույն ձևերը:		
Մանկական աշխատանք	Հայաստանը վավերացրել է երեխաների աշխատանքին վերաբերող միջազգային կոնվենցիաները: 14-ից 16 տարեկան երեխաները կարող են աշխատել ծնողի կամ օրինական խնամակալի գրավոր համաձայնությամբ: Աշխատանքային շաբաթվա առավելագույն տևողությունը 24 ժամ է 14-ից 16 տարեկան երեխաների	Աշխատանքային օրենսգիրքը բացահայտորեն չի պահանջում գործատուներից 14-ից 18 տարեկան երեխային աշխատանքի ընդունելիս համապատասխան ռիսկերի գնահատում իրականացնել	Ռիսկերի գնահատում կպահանջվի, եթե Ծրագրի գործողությունները նախատեսում են 14-ից 18 տարեկան երեխաների ներգրավում, որը կիրականացվի ՀՏԶՀ-ի և/կամ ՀՏԶՀ-ի կողմից

	համար և 36 ժամ՝ 16-ից 18 տարեկան երեխաների համար: Մինչև 18 տարեկան երեխաները գիշերը կամ տոն օրերին չեն կարող արտաժամյա աշխատել վնասակար, ծանր կամ վտանգավոր պայմաններում: Անչափահաս քաղաքացիների հետ աշխատանքային պայմանագիր կնքելիս գործատուն պարտավոր է պահանջել առողջական վիճակի մասին տեղեկանք:	այնպիսի ասպեկտներով, ինչպիսիք են ԱԱԱ-ն, աշխատանքի բնույթը և վերադասի կողմից վերահսկումը:	վարձված երրորդ կողմի խորհրդատուների սերտ վերահսկողությամբ: Բոլոր կատեգորիաների աշխատողների աշխատանքի ընդունվելուց առաջ կարող է կիրառվել տարիքի ստուգման մեխանիզմ:
Հարկադիր աշխատանք	Հայաստանը վավերացրել է «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» ԱՄԿ թիվ 291 կոնվենցիան և «Հարկադիր աշխատանքը վերացնելու մասին» ԱՄԿ թիվ 1052 կոնվենցիան: Աշխատանքային օրենսգիրքն արգելում է հարկադիր և պարտադիր աշխատանքը և տալիս է հարկադիր աշխատանքի սահմանումներ, որոնք համահունչ են ԱՄԿ-ի Հարկադիր աշխատանքի մասին կոնվենցիային:		Կիրառելի չէ: Ծրագիրը չի նախատեսում հարկադիր և/կամ պարտադիր աշխատանք:
Պաշտպանություն խոցելի խմբերին		Թեև Աշխատանքային օրենսգիրքը կիրառելի է Հայաստանի բոլոր քաղաքացիների և երկրում աշխատող այլ անձանց, այդ թվում՝ օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ, Օրենսգիրքը կիրառելի չէ օտարերկրյա աշխատողների նկատմամբ, ովքեր աշխատանքային հարաբերություններ են	Պետք է ներդրվի աշխատողների ԲԼՄ, որպեսզի աշխատողներին հնարավորություն ընձեռվի բարձրաձայնել իրենց մտահոգություններն ու բողոքները՝ կապված իրենց աշխատանքի հետ և աջակցություն ստանալ դրանց լուծման գործում: Անմիջական և պայմանագրային աշխատողների համար

		կնքում արտերկրում գտնվող օտարերկրյա կազմակերպության հետ, բայց գործում են Հայաստանում: Այս բացը գործոն կհանդիսանա, եթե Ծրագիրը ներգրավի օտարերկրյա կապալառուների, որոնց աշխատողները կաշխատեն արտերկրից:	ԲԼՄ-ն կօգտագործվի աշխատավայրի հետ կապված խնդիրների վերաբերյալ բողոքները լուծելու համար: Աշխատողների ԲԼՄ-ն կօգտագործվի նաև ՍՇՉ/ՍՈ հետ կապված բողոքները ստանալու և լուծելու համար:
Սեռական շահագործում և չարաշահում/ սեռական ոտնձգություն (ՍՇՉ/ՍՈ)	Աշխատավայրում ՍՇՉ/ՍՈ վարքագծի արգելքը նախատեսված է Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների մասին օրենքով և վերանայված աշխատանքային օրենսգրքով (ներդրվել է 2023 թվականի մայիսին): Աշխատանքային օրենսգիրքը ՍՇՉ/ՍՈ-ն ճանաչում է որպես աշխատանքային կարգապահության կոպիտ խախտում, որը պահանջում է կարգապահական տույժեր: ՍՇՉ/ՍՈ վերապրածներին աշխատավայրում տրամադրվում է ամենամյա արձակուրդ իրենց խնդրանքով, անկախ աշխատանքի ժամանակաշրջանից:	Գործող իրավական դաշտը չի ներառում աշխատավայրում quid pro quo[10] տարրեր: Ավելին, Քրեական օրենսգիրքը (2021) չի քրեականացնում սեռական ոտնձգությունը որպես պատժելի արարք: Աշխատանքային օրենսգիրքը չի առաջարկում վերապրածների պաշտպանության լրացուցիչ մեխանիզմներ:	Անմիջական և պայմանագրային աշխատողների համար ԲԼՄ-ն կգործի նաև սեռական շահագործման և չարաշահման և սեռական ոտնձգությունների հետ կապված բողոքների դեպքում: Այս մեխանիզմի կիրառման նպատակը ՍՇՉ/ՍՈ կանխարգելումն է և բողոքներին արձագանքելը: Միջոցառումները վերաբերում են ՍՇՉ/ՍՈ-ի առումով բարձր ռիսկային ծրագրերում աշխատանքների գնումներին:

[10] Լատիներեն պտտեպ տուլ ոն, որը նշանակում է «ինչ-որ բան ինչ-որ բանի դիմաց»

			Նոր միջոցառումների համաձայն կապալառուները և ենթակապալառուները պատասխանատվություն են կրում իրենց պայմանագրերում ՍՇՀ/ՍՈ կանխարգելման և դրանց արձագանքման պարտավորությունների իրականացման համար:
Աշխատանքի անվտանգություն և առողջություն			
Անվտանգ աշխատանքային գործելակերպեր	Աշխատանքային օրենսգիրքն ընդհանուր առմամբ ներառում է ԱԱԱ դրույթներ՝ ԲՍՍ2-ին համահունչ, ներառյալ՝ ի թիվս այլոց՝ անվտանգ և առողջ աշխատանքային միջավայրեր, ԱԱԱ ռիսկերի գնահատումներ և պլաններ, անվտանգության ուսուցման և ԱԱԱ-ների դրույթներ, սանիտարական և հանգստի հարմարություններ: Քրեական օրենսգիրքը նախատեսում է պատիժներ ԱԱԱ օրենքների և կանոնակարգերի խախտման համար: Գործատուները պատասխանատու են ԱԱԱ պահանջներին համապատասխանության մշտադիտարկման ընթացակարգեր սահմանելու համար, ներառյալ ներքին հաստատումները, անվտանգության փորձագետների հավաքագրումը, ԱԱԱ	Թեև ընդհանուր առմամբ ԱԱԱ ասպեկտները ներառված են, գործնականում միայն օրինական աշխատանքային պայմանագրերով աշխատողներն են պաշտպանված: Ավելին, Աշխատանքային օրենսգիրքը բացահայտորեն չի արգելում վրեժխնդրությունը աշխատողների նկատմամբ, որոնք հաղորդում են անապահով աշխատանքային գործելակերպերի մասին, և	Հայտնաբերված բացերը արծարծվում են որպես ԱԿԸ քաղաքականության և ընթացակարգերի մաս: Սա ներառում է i) գաղտնիության պահպանմամբ աշխատողների բողոքների լուծման մեխանիզմի դրույթները. ii) աշխատանքների կասեցումը, որտեղ հաղորդվում և (կամ) նկատվում են ոչ անվտանգ գործելակերպեր iii) ԱՊՄ-ի տրամադրումը, ներառյալ առաջին օգնության

	հանձնաժողովների նշանակումը և աշխատողներին ԱԱԱ ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը:	չի նախատեսում դրույթներ, որոնք թույլ կտան աշխատողներին լքել անապահով աշխատանքային իրավիճակները: Աշխատանքային օրենսգիրքը չի ներառում հստակ պահանջներ աշխատավայրերում առաջին օգնության փաթեթների, տղամարդկանց և կանանց համար նախատեսված առանձին լվացարանների և վերապատրաստման վերաբերյալ արձանագրությունների պահպանման վերաբերյալ:	դեղատուփի մշտական առկայություն. iv) առանձին հարմարություններ տղամարդկանց և կանանց համար, ըստ հնարավորության, ինչպիսիք են լվացարանները, քնելու վայրերը և այլն:
Դժբախտ պատահարներ և միջադեպեր	Աշխատանքային օրենսգիրքը ներառում է դրույթներ դժբախտ պատահարների և միջադեպերի մասին գործատուին և ոստիկանությանը հայտնելու վերաբերյալ:	Կատարվում է ծառայողական քննություն՝ պարզելու աշխատավայրում մասնագիտական հիվանդությունների և դժբախտ պատահարների պատճառները: Աշխատանքային հիվանդությունները և դժբախտ պատահարները ենթակա են պարտադիր գրանցման գործատուի կողմից: Սա վերաբերում է	Բանկը պետք է անհապաղ տեղեկացվի Ծրագրի հետ կապված ցանկացած միջադեպի կամ պատահարի մասին, որն ունի կամ կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի, ազդակիր համայնքների, հասարակության կամ աշխատողների վրա, ներառյալ՝ առանց

		պաշտոնապես գրանցված անձնակազմին:	սահմանափակման գենդերային բռնության մասին որևէ պնդում և/կամ սեռական շահագործում, չարաշահում և ոտնձգություն (ԳԲ/ՍՇՉՈ), Ծրագրին առնչվող աշխատանքային դժբախտ պատահարներ կամ մահվան դեպքեր, կամ աշխատանքային գործադուլներ և սոցիալական անկարգություններ. նշելով անհապաղ ձեռնարկված միջոցները կամ նախատեսվող գործողությունները լուծման համար: Բանկը պետք է տեղեկացվի միջադեպի կամ պատահարի մասին իմանալուց հետո 48 ժամվա ընթացքում՝ Համաշխարհային բանկի Շրջակա միջավայրի և սոցիալական պատահարների արձագանքման գործիքակազմի (ԲՍՊԱԳ/ESIRT) համաձայն: Միջադեպի մասին

			հաշվետվությունը կտրամադրվի Բանկի համար ընդունելի ժամկետներում, ինչպես պահանջվում է:
Բողոքների լուծման մեխանիզմ			
Բողոքների քննարկում և աշխատանքային վեճեր	Աշխատողները կարող են դիմել դատական ատյաններին, եթե կարծում են, որ իրենց իրավունքները ոտնահարված են: Աշխատանքային վեճերը ենթակա են դատական լուծման՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն: Աշխատանքային վեճերը կարող են լուծվել նաև կոլեկտիվ պայմանագրի և (կամ) արբիտրաժի միջոցով: Քաղաքացիական ծառայողները կարող են հետամուտ լինել իրենց դեպքին Վարչական դատարանին առընթեր էթիկայի հանձնաժողովի միջոցով, ինչպես նշված է «Քաղաքացիական ծառայողների մասին» օրենքով:	Աշխատանքային օրենսգիրքը չի նախատեսում բողոքների լուծում գործատուի մակարդակով, ինչպես նաև դրույթներ՝ գաղտնիությունը պահպանելու և բողոքատուների պաշտպանությունը հաշվեհարդարից պաշտպանելու համար:	Աշխատակիցները կտեղեկացվեն բողոքների մեխանիզմի մասին հավաքագրման պահին և մեխանիզմի օգտագործման դեպքում նրանց ցանկացած հաշվեհարդարից պաշտպանելու նպատակով ձեռնարկվող միջոցների մասին: Ծրագիրը կսահմանի ԲՄ քայլ առ քայլ ընթացակարգ Ծրագրի աշխատողների համար, որը համապատասխանում է ԲՍՍՀ-ին մինչև Ծրագրի մեկնարկը և կնկարագրի դրանք Ծրագրի կառավարման ձեռնարկում (ԾԿՁ): Բողոքների ընթացակարգերը պետք է համապատասխանեցվեն Ծրագրի, մշակույթի և աշխատուժի կարիքներին: Բողոքների

			ընթացակարգերը կարող են ներառվել կոլեկտիվ պայմանագրերում: ԲՄ-ն հասանելի կլինի բոլոր աշխատակիցներին տարբեր միջոցներով (գրավոր, հեռախոս, ֆաքս, սոցիալական մեդիա և այլն):

6. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆԱԿԱԶՄ

ԱԿԸ-ն ծառայում է որպես ուղեցույց Ծրագրի բաղադրիչների աշխատանքային ռիսկերի կառավարման համար: Բաղադրիչ 2-ի ենթածրագրերի գործիքները, ինչպիսիք են՝ տեղանքին հատուկ Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանները (ԲՍԿՊ), Կապալառուի բնապահպանական և սոցիալական կառավարման պլանները (Կ-ԲՍԿՊ), վարքագծի կանոնները, Մարդկային ռեսուրսների (ՄՌ) ուղեցույցը և այլն պետք է հիմնվեն ԱԿԸ դրույթների վրա:

Ծրագրի մակարդակով ՀՏՁՀ-ն կստանձնի ընդհանուր պատասխանատվություն՝ ապահովելու ԱԿԸ-ի դրույթների ինտեգրումը համապատասխան գործիքների մեջ, և դրանց պատշաճ իրականացումը: Սա ներառում է Ծրագրի շրջանակներում աշխատանքի ընդունման գործելակերպի ԱԿԸ-ում սահմանված քաղաքականությանն ու ընթացակարգերին համապատասխանության ապահովում, ներառյալ երրորդ կողմի մատակարարների, շինարարական աշխատանքների կապալառուների, լիովին համապատասխանություն ԱԿԸ-ի պահանջներին աշխատանքների կատարման ընթացքում: Ծրագրի համակարգողը պատասխանատու է ԱԿԸ-ի ընդհանուր իրականացման համար:

Քանի որ ՁՄԵԾ-ն իրականացվում է ՀՏՁՀ-ի կողմից, ՀՏՁՀ-ն կրելու է հիմնական պատասխանատվությունը ինստիտուցիոնալ պայմանավորվածությունների, ԱԿԸ-ի իրականացման և մշտադիտարկման համար: ՀՏՁՀ-ն կորոշի յուրաքանչյուր բաղադրիչի ներքո ենթածրագրի միջամտությունները. գնումների ընթացակարգով ձեռք կբերի խորհրդատուներ և կապալառուներ, կպատրաստի ենթածրագրի նախագծեր և մրցութային փաստաթղթեր, ինչպես նաև ձեռք կբերի շինարարական աշխատանքների և տեխնիկական հսկողության կապալառուներ: ՀՏՁՀ-ն պատասխանատու կլինի կապալառուի և տեղանքի հսկողության, տեխնիկական որակի ապահովման, հավաստագրման և աշխատանքների վճարման համար: ՀՏՁՀ-ն կապահովի աշխատանքի կառավարման ընթացակարգերի ինտեգրումը գնումների պայմանագրերի գործընթացներում: ՀՏՁՀ-ն պատասխանատու կլինի իրականացնելու կամ օգնելու խորհրդատուներին ԲԵՍ զննման գործընթացում, ըստ անհրաժեշտության, և հաստատելու սքրինինգի արդյունքները և հետագա Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանները (ԲՍԿՊ), ինչպես նաև վերահսկելու ԲԵՍ ռիսկի նվազեցման բոլոր միջոցառումները, ներառյալ ԱԿԸ-ով սահմանված միջոցառումները: ԱԿԸ-ի իրականացման մշտադիտարկումը և վերահսկողությունը կկատարվի ՀՏՁՀ-ի ԲԵՍ թիմի սոցիալական մասնագետի կողմից:

Սոցիալական հարցերի և բնապահպանության մասնագետները կվերլուծեն Ծրագրի աշխատանքների հետ կապված ռիսկերը և կվերահսկի ԱԿԸ-ի իրականացումը:

ՀՏՁՀ-ն կընդգրկի ԲԵՍ գործիքները, ներառյալ ԱԿԸ-ն շինարարության կապալառուների ընտրության մրցութային փաստաթղթերում, որպեսզի հայտատուները ներառեն ԱԱԱ-ի և համայնքի առողջության և անվտանգության միջոցառումների բյուջետային պահանջներն իրենց համապատասխան հայտերում: Կապալառուն կմշակի և կկիրառի ԱԱԱ կառավարման համակարգ, որը կհամապատասխանի աշխատանքի ծավալին, պայմանագրի տևողության և աշխատանքի անվտանգության և առողջության վերաբերյալ ՄՖԿ/ՀԲ Շրջակա միջավայրի առողջության և անվտանգության ընդհանուր ուղեցույցներին (ՇՄԱԱԸՈՒ/EHSGs): Կապալառուն կընդունի ենթածրագրի համար առաջարկվող ԲԵՍ ռիսկի նվազեցման բոլոր միջոցառումները: Ցանկացած պայմանագրի համար հայտ ներկայացնելուց առաջ կապալառուն պետք է ներառի ԲՍԿՇ-ի, ներառյալ ԱԿԸ-ի պահանջները և ապահովի, որ բոլոր աշխատողները ստորագրեն Վարքագիծի կանոնակարգը: Անհրաժեշտության դեպքում, ՀՏՁՀ-ն կարող է հետ պահել կապալառուի վճարումը այնքան ժամանակ,

մինչև ուղղիչ գործողություն(ներ) իրականացվի/իրականացվեն ԱԿԸ-ի զգալի անհամապատասխանության դեպքում:

Առաջնային մատակարարներ ունենալու դեպքում կապալառուները պետք է ապահովեն, որ աշխատանքի հետ կապված ռիսկերը, հատկապես երեխաների և հարկադիր աշխատանքը, ինչպես նաև առաջնային մատակարարման աշխատողների կողմից ծրագրի անվտանգության լուրջ խնդիրները կառավարվեն ԲՍՍ2-ի պահանջներին համապատասխան: ՀՏԶՀ-ն և բոլոր կապալառուները/իրականացնողները գնումներ կկատարեն օրինական գրանցված մատակարարներից: Օրինական գրանցումը երաշխավորում է, որ ընկերությունը իրավաբանորեն պարտավոր է հետևել Հայաստանում գործող աշխատանքային օրենսդրությանը, ինչը հնարավորություն է տալիս ենթադրել, որ մատակարարի ընկերությունում աշխատանքային օրենսդրության հիմնական պահանջները կիրառվում են:

ՀՏԶՀ-ն և կապալառուներն աշխատողների համար կկիրառեն հետևյալ ուղեցույցները.

1. Խտրականություն չի լինի աշխատանքային հարաբերությունների որևէ ասպեկտի առնչությամբ, ինչպիսիք են՝ աշխատանքի ընդունվելը, փոխհատուցումը (ներառյալ աշխատավարձը և նպաստները), աշխատանքային պայմանները և կարգապահական գործելակերպը:

2. Հալածանքը, ահաբեկումը և/կամ շահագործումը կկանխարգելվի կամ պատշաճ կերպով կլուծվի.

ա. Պաշտպանության և աջակցության հատուկ միջոցները խտրականությունը վերացնելու կամ որոշակի աշխատանքի համար ընտրությունը խտրականություն չեն համարվի,

բ. Ծրագրի անապահով աշխատողներին կտրամադրվի հատուկ պաշտպանություն:

3. Բողոքների լուծման մեխանիզմ բոլոր աշխատողների համար. բոլոր աշխատողները կօգտվեն Ծրագրի ԲԼՄ-ից՝ աշխատանքի հետ կապված ցանկացած բողոք գրանցելու համար: Աշխատողներին խրախուսվում է հնարավորության դեպքում հարցերը լուծել իրենց համապատասխան գործատուի հետ: Այնուամենայնիվ, բոլոր տեսակի աշխատողները կարող են ցանկացած ժամանակ կիրառել Ծրագրի ԲԼՄ-ն՝ բողոքներն ուղղակիորեն ՀՏԶՀ-ին ներկայացնելով (այն դեպքերում, երբ դրանք վերաբերում են կապալառուին):

Հետևյալ դիագրամները ցույց են տալիս ԱԿԸ-ի ինստիտուցիոնալ կազմակերպումն իրականացման մակարդակներում.

Գծապատկեր 1. ԱԿԸ-ի ինստիտուցիոնալ կազմակերպումը



Գծապատկեր 2. ԱԿԸ իրականացման կարգավորումներ





Հիմնվելով վերոնշյալ ինստիտուցիոնալ կազմակերպական կառուցվածքի վրա՝ առանձնահատուկ դերերն ու պատասխանատվություններն ամփոփված են ստորև.

Աղյուսակ 2: ԱԿԸ-ով սահմանված դերերն ու պարտականությունները

Ծրագիրն իրականացնող անձ	Դերեր ու պարտականություններ	Ծրագրի փուլեր
Ծրագրի մակարդակ		
ՀՏՋՀ Ծրագրի համակարգող	• Ապահովել ԱԿԸ-ի ինտեգրումը բաղադրիչների մեջ և դրանց հետևողական իրականացումը Ծրագրի ողջ ընթացքում: • Կիրառել կարգապահական գործողություններ՝ խախտումների դեպքում և/կամ կապ հաստատել համապատասխան մարմինների հետ աշխատանքի հետ կապված ցանկացած մեղադրանքի դեպքում: • Համագործակցել Աշխատանքային օրենսգրքի կիրարկման համար պատասխանատու համապատասխան գերատեսչությունների և/կամ նախարարությունների, Աշխատանքի տեսչության, օմբուդսմենի և այլնի հետ:	Ծրագրի իրականացման ողջ ընթացքում, այն պահից, երբ Ծրագրի գործարկման վերաբերյալ հայտարարություն կտարածվի
Էլեկտրոնային ծրագրերի ղեկավար	• Պատասխանատու է էլեկտրոնային նյութերի մշակման աշխատանքների համակարգման համար	
Ենթակառուցվածքային ծրագրերի ղեկավար	• Պատասխանատու է Բաղադրիչ 2-ի ներքո աշխատանքների համակարգման համար	
Սոցիալական հարցերի և բնապահպանության մասնագետներ	• Սահմանել ծրագրին հատուկ ընթացակարգերը, ներառյալ գործիքների փաթեթները, ուղեցույցները՝ ԱԿԸ-ի գործարկման համար: • Ստեղծել ԱԿԸ-ի իրականացման համակարգման մեխանիզմ և մշտադիտարկման ընթացակարգ: • Ապահովել աշխատողների վարքագծի	

	կանոնների հետևողական կիրառումը:	
Մշտադիտարկման և գնահատման մասնագետ	• Մշտադիտարկել Կապալառուների կողմից պայմանագրերի կիրարկումը, • Զբաղվածության մակարդակի ցուցանիշների կանոնավոր մշտադիտարկում (ըստ սեռի), ստեղծվող նոր աշխատատեղերի և կատարման տվյալների ներառում առաջընթացի հաշվետվություններում:	
Գնումների մասնագետներ	• Ներառել ԱԿԸ-ը մրցութային փաստաթղթերում՝ ի թիվս այլ ԲՄ փաստաթղթերի:	
Ճարտարագետներ	• Ընդգրկել ԱԿԸ վերաբերյալ դասընթացներում՝ շինարարական աշխատանքների ընթացքում դրանց իրականացումը վերահսկելու նպատակով:	
Ենթածրագրի մակարդակ		
Կապալառու ընկերության ղեկավար	• Ապահովել ԱԿԸ իրականացումն իր ընկերությունում:	
Կապալառուի ԲՍԱԱ մասնագետներ	• Ներկայացնել ԱԿԸ-ն և ԲՄ-ն Կապալառուի աշխատակազմին: • Վերահսկել ԱԿԸ իրականացումն ընկերության ներսում:	
Տեխնիկական հսկողության ճարտարագետներ	• Ընդգրկել ԱԿԸ վերաբերյալ դասընթացներում՝ շինարարական աշխատանքների ընթացքում դրանց իրականացումը վերահսկելու նպատակով:	

7. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Ծրագիրը պահանջում է Աշխատանքային օրենսգրքի և աշխատանքի կառավարմանն առնչվող այլ համապատասխան կանոնակարգերի պատշաճ իրականացում: Այն դեպքերում, երբ ազգային օրենսդրական համակարգում առկա են բացեր ԲՍՍ2-ի համեմատ և/կամ որոշակի ոլորտներ չեն կարգավորվում, ԱԿԸ-ն սահմանում է հատուկ քաղաքականություններ և ընթացակարգեր՝ ապահովելու, որպեսզի ԲՍՍ2-ի կիրառելի դրույթներն ամբողջովին արծարծվեն: Ծրագրով պահանջվող հատուկ դրույթները հետևյալն են.

ա. Նվազագույն տարիքը

բ. Պայմանները և դրույթները

գ. ԱԱԱ-ն

դ. Անդրադարձ խոցելիությանը

ե. Խտրականության բացառումը:

ՋՄԵԾ-ի համար պատրաստված ԱԿԸ-ն կցված կլինի տարբեր կապալառուների հետ կնքված բոլոր պայմանագրերին՝ նախագծերի պատրաստման, շինարարական աշխատանքների և տեխնիկական վերահսկողության պայմանագրերին: Ի հավելումն, մրցույթի հայտատուները պետք է ներկայացնեն իրենց ընկերությունների ԲՍԱԱ քաղաքականությունը և իրականացման պլանը, ստորագրված Վարքագծի կանոնակարգի հետ միասին: Բնապահպանության և սոցիալական հարցերի մասնագետները կանոնավոր մշտադիտարկման այցելություններ կիրականացնեն շինհրապարակներ՝ վերահսկելու աշխատանքների համապատասխանությունը ԲՍԱԱ պահանջներին, ժամկետներին և պայմաններին, ինչպես նաև ընդհանուր միջավայրն աշխատավայրերում: Ծրագրի շրջանակներում կկազմակերպվի աշխատաժողով աշխատանքի կառավարման վերաբերյալ քննարկելու վերը նշված բոլոր դրույթները՝ նվազագույն տարիքը, դրույթները և պայմանները, ԱԱԱ-ն, ընդգրկված ամբողջ անձնակազմի համար հավասար հնարավորությունների ապահովումը, աշխատողների համար բողոքների մեխանիզմ, որը ներառում է ՍՇՉ/ՍՈ զգայուն ոլորտը, կանանց և խոցելի խմբերի աշխատանքի ընդունման առաջնահերթությունը, կապալառուների ԲՍ և ԱԱԱ անհամապատասխանությունները պահանջներին և միջոցներին (կապալառուին չվճարելը, ԲՍԱԱ անձնակազմը փոխելու պահանջը և այլն):

8. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԵԽԱՆԻԶՄ

Բողոքների մեխանիզմն (ԲՄ) ընթացակարգ է, որն ապահովում է աշխատանքի ընդունման գործընթացին և աշխատավայրին առնչվող բողոքները լուծելու հստակ և թափանցիկ շրջանակ: Դա սովորաբար ունենում է բողոքների ներքին ընթացակարգի ձև, որին հաջորդում է քննարկումը և ղեկավարության արձագանքն ու հետադարձ կապը:

ԲՄ-ն կներդրվի անմիջական և պայմանագրային բոլոր աշխատողների համար, որպեսզի նրանք կարողանան բարձրացնել աշխատավայրի վերաբերյալ իրենց մտահոգությունները: Աշխատողներն, աշխատանքի ընդունվելիս, կտեղեկացվեն ԲՄ-ի և ձեռնարկված միջոցների մասին՝ պաշտպանելու նրանց ցանկացած հաշվեհարդարից դրա օգտագործման դեպքում:

Ծրագիրը կստեղծի մանրամասն (քայլ առ քայլ) ԲՄ ընթացակարգ Ծրագրի աշխատողների համար՝ ԲՍՍ2-ին համահունչ մինչև Ծրագրի ակտիվացում, որը կներկայացվի Ծրագրի կառավարման ձեռնարկում (ԾԿՁ):

Ըստ էության, այս ԲՄ-ն նույնը չէ Ծրագրի ազդեցությանը ենթակա շահագրգիռ կողմերի համար ստեղծվող ԲՄ հետ: ԲՄ-ն չի խանգարում աշխատողներին դիմելու դատարան: Բողոքների ընթացակարգերը պետք է համապատասխանեցվեն Ծրագրին, մշակույթին և աշխատուժի կառուցվածքին: Բողոքների ընթացակարգերը կարող են ներառվել կոլեկտիվ պայմանագրերում: Կապալառուի կոլեկտիվ պայմանագրի դրույթը, որով սահմանված մեխանիզմը հնարավորություն է տալիս աշխատողին աշխատանքին առնչվող բողոք ներկայացնելու իրենց արհմիության միջոցով կամ արհմիության աջակցությամբ, բավարար է ԲՍՍ2-ին համապատասխանելու համար:

ԲՄ-ն հասանելի կլինի բոլոր աշխատակիցներին տարբեր միջոցներով (գրավոր, հեռախոսով, ֆաքսով, սոցիալական մեդիայի միջոցով և այլն): Բողոքների գրանցամատյանը կպահվի ՀՏՁՀ-ի գրասենյակում: Անմիջական աշխատողների հետ կապված ռիսկերը մեղմելու համար կստեղծվի ԲՄ անմիջական աշխատողների համար:

ԶՄԵԾ շրջանակում ԲՄ կառուցվածքը

Առաջին մակարդակ. Ծրագրի համակարգողը/ՀՏՁՀ-ի Մարդկային ռեսուրսների ստորաբաժանումը, կախված բարձրացված խնդրի բնույթից, պատասխանատու կլինի ընդունելու, քննարկելու և ժամանակին լուծելու բողոքները, ներառյալ չհաշվառված աշխատանքային ժամերի և արտաժամյա աշխատանքի համար փոխհատուցման բացակայության, աշխատավարձերի վճարման ուշացումների/չվճարման վերաբերյալ: Եթե խնդիրը չլուծվի առաջին մակարդակում 7 աշխատանքային օրվա ընթացքում, ապա այն կտեղափոխվի հաջորդ մակարդակ:

Երկրորդ մակարդակ. ՀՏՁՀ-ի տնօրենը ԲՄ երկրորդ մակարդակն է անմիջական աշխատողների համար, եթե ՄՌ-ի կողմից արձագանք չի ստացվում կամ եթե պատասխանը գոհացուցիչ չէ, ապա բողոքողներն ու հետադարձ կապ ապահովողները հնարավորություն ունեն ուղղակիորեն դիմելու ՀՏՁՀ տնօրենին՝ խնդրին հետևելու համար: Բողոքները պետք է քննարկվեն և հետադարձ կապ տրամադրվի հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում:

ԲՄ կառուցվածքը պայմանագրային աշխատողների համար

Կապալառուները պետք է մշակեն իրենց սեփական ԲՄ-ը և լուծեն պայմանագրային աշխատողների դժգոհությունները: Կապալառուի կողմից նշանակված բողոքների համար պատասխանատու անձը

(ԲՊԱ) կգրանցի պայմանագրային աշխատողների բողոքներն ու դիմումները և պատասխանատու կլինի բողոքները հասցեագրելու համար:

Առաջին մակարդակ. Կապալառուի սոցիալական մասնագետը կծառայի որպես բողոքների առանցքային անձ՝ ներկայացնելու Ծրագրի աշխատողների բողոքներն ու դիմումները: Մասնագետը պատասխանատու կլինի համապատասխան ստորաբաժանումների/կազմակերպությունների և անձանց հետ համակարգելու միջոցով այս բողոքները լուծելու համար: Եթե խնդիրը չի կարող լուծվել Կապալառուի մակարդակով 7 աշխատանքային օրվա ընթացքում, ապա այն կտեղափոխվի ՀՏՋՀ-ի մակարդակ:

Երկրորդ մակարդակ. Եթե կա իրավիճակ, երբ Կապալառուն չի կարող աջակցել բողոքողին, բողոքը կուղարկվի ՀՏՋՀ-ի կադրերի բաժին:

Անմիջական և պայմանագրային աշխատողների համար ստեղծված ԲՄ-ն կօգտագործվի աշխատավայրի վերաբերյալ մտահոգություններ արտահայտող բողոքները լուծելու համար և զգայուն կլինի սեռական շահագործման և չարաշահման (ՍՇՉ) և սեռական ոտնձգությունների (ՍՈ) վերաբերյալ բողոքների հանդեպ: Այս միջոցների կիրառման նպատակը ՍՇՉ/ՍՈ կանխարգելումն է և բողոքներին արձագանքելը:

Այս նոր միջոցները խթան են ստեղծում կապալառուների և նրանց ենթակապալառուների համար՝ ամրապնդելու իրենց կատարողականը ՍՇՉ/ՍՈ-ի կանխարգելման գործում և բարելավելու ՍՇՉ/ՍՈ միջադեպերին իրենց արձագանքման ձևերը: Միջոցառումները վերաբերում են ՍՇՉ/ՍՈ առումով բարձր ռիսկային գնահատված ծրագրերի աշխատանքների գնումներին:

Նոր միջոցառումներով կապալառուները և ենթակապալառուները պատասխանատու են իրենց պայմանագրերի շրջանակներում ՍՇՉ/ՍՈ կանխարգելման և արձագանքման պարտավորությունների իրականացման համար: Եթե Կապալառուն/Ենթակապալառուն չի կատարում ՏՍՇՉ/ՍՈ կանխարգելման և արձագանքման իրենց պարտավորությունները, ապա նրանք զրկվում են Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագրից 2 տարի ժամկետով:

ԲՄ-ը հատուկ ընթացակարգեր կունենա ՍՇՉ/ՍՈ-ի մեղադրանքներին արձագանքելու համար, որոնք կներկայացվեն Ծրագրի որևէ աշխատակցի դեմ: Այնուամենայնիվ, ԲՄ-ով ներկայացված ցանկացած բողոքի համար (ներառյալ բողոքները, որոնք վերաբերում են գենդերային բռնությունների այլ ձևերին, որոնք կապված չեն Ծրագրի հետ), կլինեն ընթացակարգեր՝ անհատին ուղղորդելու գենդերային բռնությունների վերաբերյալ ծառայություններ մատուցողների մոտ:

Արդյունավետ ԲՄ ուղեցույցը ներառում է հետևյալ հիմնական սկզբունքները.

A. Գաղտնիություն և անանունություն

• Առկա են բողոքների գրանցման բազմաթիվ ուղիներ,
• Անվտանգ և գաղտնի գրանցման հնարավորություն. վերապրածները պետք է կարողանան հայտնել ՍՇՉ/ՍՈ-ի մասին՝ առանց հրապարակայնորեն բացահայտվելու,
• Բողոքների մասին տեղեկատվության պաշտպանություն,
• Դեպքերի մասին տեղեկատվության գրանցում գրանցամատյանում և պահպանում կողպվող պահարանում՝ փաստագրելով միջադեպի մասին միայն սահմանափակ անանուն տեղեկություններ:

B. Դեպքը վերապրած անձի շուրջ կենտրոնացում և անվտանգություն

• Աջակցություն ՍՇՁ/ՍՈ վերապրածի համար աջակցող, արժանապատիվ և պաշտպանիչ միջավայրի ստեղծմանը և լիակատար հարգանք նրա իրավունքների, ցանկությունների և ընտրությունների նկատմամբ,
• Վերապրածի տեղեկացված համաձայնության ստացում, որպես երաշխիք ԲՄ ողջ ընթացքում,
• Գաղտնիության և անանունության պահպանում՝ որպես վերապրածների անվտանգության երաշխավորման հիմնարար միջոց. վերապրածների գործերը չպետք է քննարկվեն որևէ մեկի հետ,
• Վերապրածի անվտանգությունը միշտ առաջնահերթություն է,
• Գործի վերաբերյալ հետադարձ կապի տրամադրում միայն վերապրածին և զգուշություն վերապրածից բացի այլոց որևէ արդյունք հաղորդելու հարցում:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՀՏՋՀ-ի ԲԵՍ թիմի բնապահպանության և սոցիալական հարցերի մասնագետները սերտորեն կհամագործակցեն Ծրագրի տեխնիկական մասնագետների և գնումների պատասխանատուների և/կամ գնումների գործընթացները կառավարող համապատասխան ստորաբաժանման հետ՝ ապահովելու, որ աշխատանքի հետ կապված ռիսկերը գնահատվեն որպես մանրամասն նախագծերի մշակման մաս, արտացոլվեն աշխատանքների տեխնիկական առաջադրանքում և պայմանագրային դրույթներում: Նախքան մրցույթի հայտարարության հրապարակումը ԱԿԸ-ի համապատասխան դրույթները պետք է ներառվեն գնումների փաստաթղթերում՝ հստակեցնելով աշխատանքի պահանջներն ու ժամանակացույցը, անձնակազմի որակավորման, բնապահպանական, սոցիալական, առողջության և անվտանգության (ԲՍԱԱ) ռիսկերի կառավարման, աշխատանքի ընդունման գործելակերպի և այլ պահանջները:

Հայտատուները պետք է ցույց տան, որ իրենց կառավարման ռազմավարությունները և իրականացման պլանները (ԿՌԻՊ) կամ համարժեք փաստաթղթերը համապատասխանում են հայտերի ներկայացման հրավերում նշված ԱԿԸ պահանջներին: ԿՌԻՊ-երը կարող են ներառել ծրագրի կառավարման օրգանոգրամ, ներառյալ ԲՍԱԱ հիմնական անձնակազմը, կորպորատիվ վարքագծի կանոնները, համակարգերը, ԱԱԱ պահպանման և վերահսկման ընթացակարգերը տեղամասերում և այլն:

Շինարարության կապալառուների ընտրության գործընթացը կարող է նաև ներառել հետևյալը.

• Տեղեկատվություն պետական գրանցման համակարգում, օրինակ՝ կորպորատիվ ռեեստրներում և պետական փաստաթղթերում, որոնք վերաբերում են աշխատանքային օրենսդրության խախտումներին, ներառյալ աշխատանքային տեսչությունների և այլ հարկադիր մարմինների հաշվետվությունները: Սա կարող է ներառել դժբախտ պատահարների և մահվան դեպքերի մասին գրառումներ և ծանուցումներ իշխանություններին:

• Բիզնեսի լիցենզիաներ, գրանցումներ, թույլտվություններ և հաստատումներ:

• ԲՍԱԱ կառավարման պլանների իրականացում նմանատիպ նախագծերից՝ անցյալի կատարողականը ցուցադրելու համար:

• Աշխատողների աշխատավարձի վերաբերյալ գրառումները, ներառյալ աշխատած ժամերը և ստացված վարձատրությունը,

• Ենթակապալառուների և մատակարարների հետ նախկին պայմանագրերի պատճենները, որոնք ներառում են ԲՍՍ2-ն արտացոլող դրույթներ և պայմաններ:

Վերահսկող ճարտարագետները կվերահսկեն կապալառուների և նրանց ենթակապալառուների կատարողականը կապված պայմանագրային աշխատողների հետ՝ կենտրոնանալով կապալառուների կողմից իրենց պայմանագրային դրույթների (պարտավորություններ, ներկայացուցչություններ և երաշխիքներ) կատարման վրա: Սա կարող է ներառել ծրագրի տեղամասերի կամ աշխատատեղերի պարբերական աուդիտներ, ստուգումներ և/կամ տեղում, կապալառուների կողմից կազմված աշխատանքի կառավարման գրառումների ու հաշվետվությունների ստուգում: Կապալառուների աշխատանքի կառավարման գրառումները և հաշվետվությունները կարող են ներառել՝ ա) երրորդ կողմերի և պայմանագրային աշխատողների միջև աշխատանքային պայմանագրերի կամ պայմանավորվածությունների ներկայացուցչական նմուշ. բ) ստացված բողոքներին և դրանց լուծմանը

վերաբերող գրառումներ. գ) հաշվետվություններ՝ կապված անվտանգության ստուգումների, այդ թվում՝ մահվան դեպքերի և միջադեպերի, ինչպես նաև ուղղիչ գործողությունների իրականացման հետ. դ) ազգային օրենսդրությանը չհամապատասխանելու դեպքերի հետ կապված գրառումներ. և (ե) պայմանագրային աշխատողներին տրամադրված աշխատանքային պայմանների և ԱԱԱ վերաբերյալ վերապատրաստման գրառումները:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 260-րդ հոդվածի համաձայն՝ աշխատավայրում կամ աշխատանքային պարտականությունները կատարելիս դժբախտ պատահարից տուժած, մասնագիտական սուր հիվանդությամբ տառապող աշխատողը (եթե ի վիճակի է), ինչպես նաև դժբախտ պատահարի կամ դրա հետևանքների ականատեսը, պարտավոր են անհապաղ հայտնել բաժնի պետին, գործատուին, գործատուի առողջության և անվտանգության ծառայությանը:

Աշխատավայրում աշխատողի մահվան դեպքում գործատուն պարտավոր է անհապաղ տեղեկացնել ապահովագրական ընկերությանը, ՀՀ ոստիկանությանը և տեսչական մարմնին:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ կատարվում է ծառայողական քննություն՝ աշխատավայրում մասնագիտական հիվանդությունների և դժբախտ պատահարների պատճառները պարզելու համար: Աշխատանքային հիվանդությունները և դժբախտ պատահարները ենթակա են պարտադիր գրանցման գործատուի կողմից: Մասնագիտական հիվանդությունների և դժբախտ պատահարների գրանցման և ծառայողական փորձաքննության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (ՀՀ կառավարության 23.03.2006թ. թիվ 458 որոշում):

Բանկը պետք է անհապաղ տեղեկացվի Ծրագրի հետ կապված ցանկացած միջադեպի կամ պատահարի մասին, որն ունի կամ կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի, ազդակիր համայնքների, հասարակության կամ աշխատողների վրա, ներառյալ՝ գենդերային բռնության մասին որևէ պնդումը և/կամ սեռական շահագործումը, չարաշահումը և ոտնձգությունը: Ծրագրի հետ կապված աշխատանքային դժբախտ պատահարների կամ մահացու դեպքերի կամ աշխատանքային գործադուլների և սոցիալական անկարգությունների մասին պետք է տրամադրվեն բավականաչափ մանրամասներ, որոնք մատնանշում են անհապաղ ձեռնարկված միջոցները կամ նախատեսված միջոցառումներն իրավիճակը լուծելու համար, և ցանկացած կապալառուի և վերահսկող մարմնի կողմից տրամադրված ցանկացած տեղեկատվություն, ինչպես հարկն է՝ ապահովելով գաղտնիությունը հատկապես ՍՇՉ/ՍՈ-ի հետ կապված միջադեպերի դեպքում: Այնուհետև, Բանկի խնդրանքով, միջադեպի կամ պատահարի մասին հաշվետվություն կպատրաստվի:

Բանկը պետք է տեղեկացվի միջադեպի կամ պատահարի մասին իմանալուց հետո 48 ժամվա ընթացքում՝ Համաշխարհային բանկի Բնապահպանական և սոցիալական պատահարների արձագանքման գործիքակազմի (ԲՍՊԱԳ) համաձայն: Միջադեպի մասին հաշվետվությունը կտրամադրվի Բանկի համար ընդունելի ժամկետներում, ինչպես պահանջվում է:

Հավելված 1: Վարքագծի կանոնակարգի օրինակ

ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Մենք ներկայացնում ենք Կապալառու ընկերությունը [մուտքագրեք Կապալառուի անունը]: Մենք պայմանագիր ենք կնքել [մուտքագրեք Գործատուի անունը] հետ [մուտքագրեք Աշխատանքների նկարագրությունը]: Այս աշխատանքները կիրականացվեն [մուտքագրեք տարածքը և այլ վայրեր, որտեղ կիրականացվեն աշխատանքները]: Մեր պայմանագիրը պահանջում է միջոցներ ձեռնարկել վերացնելու աշխատանքների հետ կապված բնապահպանական և սոցիալական ռիսկերը, ներառյալ սեռական շահագործման և չարաշահման և գենդերային բռնության ռիսկերը:

Վարքագծի այս կանոնակարգն աշխատանքների հետ կապված բնապահպանական և սոցիալական ռիսկերը վերացնելու մեր միջոցառումների մի մասն է: Այն վերաբերում է մեր ամբողջ անձնակազմին, բանվորներին և այլ աշխատակիցներին աշխատանքային տեղամասում կամ այլ վայրերում, որտեղ իրականացվում են աշխատանքները: Այն նաև վերաբերում է յուրաքանչյուր ենթակապալառուի անձնակազմին և ցանկացած այլ անձնակազմի, որն աջակցում է մեզ աշխատանքների կատարման գործում: Այս բոլոր անձինք կոչվում են «Կապալառուի անձնակազմ» և ենթակա են սույն Վարքագծի կանոնակարգին:

Այս կանոնակարգը սահմանում է այն վարքագիծը, որը մենք պահանջում ենք Կապալառուի ողջ անձնակազմից:

Մեր աշխատավայրը այնպիսի միջավայր է, որտեղ հանդուրժելի չէ անապահով, վիրավորական կամ բռնի վարքագիծը, և որտեղ բոլոր մարդիկ իրենց հարմարավետ են զգում՝ բարձրաձայնելով իրենց խնդիրները կամ մտահոգություններն առանց վրեժխնդրության վախի:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՎԱՐՔԱԳԻԾ

Կապալառուի անձնակազմը պետք է.

1. իր պարտականությունները կատարի գրագետ և ջանասիրաբար,

2. հետևի սույն Վարքագծի կանոնակարգին և բոլոր կիրառելի օրենքներին, կանոնակարգերին և այլ պահանջներին, ներառյալ Կապալառուի այլ աշխատակցի և ցանկացած այլ անձի առողջությունն, անվտանգությունը և բարեկեցությունը պաշտպանելու պահանջները,

3. պահպանի անվտանգ աշխատանքային միջավայր, ներառյալ՝

ա. յուրաքանչյուր անձի հսկողության տակ գտնվող աշխատատեղերի, մեքենաների, սարքավորումների և գործընթացների անվտանգության ապահովումը և առողջության համար վտանգի բացառումը,

բ. անհրաժեշտ անհատական պաշտպանիչ միջոցների կրումը,

գ. քիմիական, ֆիզիկական և կենսաբանական նյութերի հետ առնչվելիս համապատասխան միջոցների կիրառումը,

դ. արտակարգ իրավիճակների գործող ընթացակարգերին հետևելը,

4. զեկուցի աշխատանքային իրավիճակների մասին, որոնք, իր կարծիքով, անվտանգ կամ առողջ չեն, և իրեն հեռու պահի աշխատանքային իրավիճակից, որը նրա համոզմամբ անմիջական և լուրջ վտանգ է ներկայացնում իր կյանքի կամ առողջության համար,

5. հարգանքով վերաբերվի այլ մարդկանց և խտրականություն չցուցաբերի հատուկ խմբերի հանդեպ՝ կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, աշխատանքային միգրանտների կամ երեխաների,

6. չներգրավվի որևէ տեսակի ոտնձգությունների մեջ, ներառյալ սեռական ոտնձգությունները, չարաշահումները և սեռական շահագործումը Կապալառուի կամ Գործատուի այլ աշխատակցի կամ հարակից համայնքների որևէ անդամի հանդեպ,

7. Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերում/աշխատանքներում Բանկի կողմից ֆինանսավորվող ապրանքների, աշխատանքների, խորհրդատվական կամ ոչ խորհրդատվական ծառայությունների հասանելիության օգտագործումը սեռական շահ ստանալու համար համարվում է սեռական շահագործում,

8. անցնի համապատասխան վերապատրաստման դասընթացներ, որոնք կտրամադրվեն՝ Պայմանագրի բնապահպանական և սոցիալական ոլորտների վերաբերյալ, այդ թվում՝ առողջության և անվտանգության հարցերի, ինչպես նաև սեռական շահագործման, չարաշահման և ոտնձգությունների վերաբերյալ,

9. զեկուցի սույն Վարքագծի կանոնակարգի խախտումների մասին, և

10. վրեժխնդիր չլինի որևէ անձի հանդեպ, ով զեկուցում է սույն Վարքագծի կանոնակարգի խախտումների մասին՝ ուղղված Կապալառուին կամ Գործատուին, կամ ով օգտվում է [Ծրագրի Բողոքների [Լուծման] Մեխանիզմից]:

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ

Եթե որևէ անձ նկատում է վարքագիծ, որը, իր կարծիքով, կարող է լինել սույն Վարքագծի կանոնակարգի խախտում կամ այլ կերպ վերաբերում է իրեն, նա պետք է անհապաղ բարձրացնի այդ հարցը: Դա կարելի է անել հետևյալ եղանակներից որևէ մեկով.

1. Կապվի [մուտքագրեք Կապալառուի սոցիալական փորձագետի անունը՝ սեռական շահագործման և չարաշահման/սեռական ոտնձգության հետ կապված համապատասխան փորձով, կամ եթե այդպիսի անձ չի պահանջվում Պայմանագրով, Կապալառուի կողմից նշանակված մեկ այլ անձ՝ այս հարցերը կարգավորելու համար] գրավոր սույն էլեկտրոնային հասցեով [ ] կամ հեռախոսով [ ] նամակով կամ անձամբ [ ] հասցեով, կամ

2. Զանգահարի [] կապալառուի թեժ գծին (եթե այդպիսին գործում է) և հաղորդագրություն թողնի:

Անձի ինքնությունը գաղտնի կպահվի, բացառությամբ այն դեպքերի, երբ մեղադրանքների մասին հաղորդումը պարտադիր չէ երկրի օրենսդրությամբ: Կարող են ներկայացվել նաև անանուն բողոքներ կամ մեղադրանքներ, որոնք կքննարկվեն պատշաճ կերպով: Մենք լրջորեն ենք վերաբերվում հնարավոր սխալ վարքագծի մասին բոլոր հաղորդագրություններին և կհետաքննենք և կձեռնարկենք համապատասխան միջոցներ: Մենք կուղղորդենք ծառայություններ մատուցողների մոտ, որոնք կարող են օգնել ենթադրյալ միջադեպն ապրած անձին, ըստ անհրաժեշտության:

Ոչ մի տեսակ վրեժխնդրություն չի լինի որևէ անձի նկատմամբ, ով բարեխղճորեն մտահոգություն է հայտնում սույն Վարքագծի կանոնակարգով արգելված ցանկացած վարքագծի վերաբերյալ: Նման հաշվեհարդարը կլինի սույն Վարքագծի կանոնների խախտում:

Վարքագծի կանոնակարգի խախտումների հետևանքները

Կապալառուի անձնակազմի կողմից սույն Վարքագծի կանոնակարգի ցանկացած խախտում կարող է հանգեցնել լուրջ հետևանքների՝ ընդհուպ մինչև դադարեցումը և հնարավոր ուղղորդումը իրավական մարմիններին:

ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ

Ես ստացել եմ այս Վարքագծի կանոնակարգի պատճենը՝ գրված ինձ համար հասկանալի լեզվով: Ես հասկանում եմ, որ եթե ես որևէ հարց ունեմ սույն Վարքագծի կանոնակարգի վերաբերյալ, կարող եմ կապվել [մուտքագրեք Կապալառուի կոնտակտային անձի անունը, ով գենդերային բռնության հետ կապված համապատասխան փորձ ունի]՝ բացատրություն ստանալու նպատակով:

Կապալառուի աշխատակցի անունը [մուտքագրեք անունը]

Ստորագրություն _____

Ամսաթիվ (օր/ամիս/տարի) _____

Կապալառուի լիազոր անձի ստորագրություն

Ստորագրություն _____

Ամսաթիվ (օր/ամիս/տարի) _____